

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ.- «ՂԱՐԱԲԱՂ ԱՐԴԵՆ ՅԱՆՁՆՈՒԱԾ Է»

Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդ, նորանկար Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գնահատմամբ, գործող իշխանութիւնները արդէն յանձնած են Լեւոնային Ղարաբաղը:

Գոնկրէսի անդամները շարունակելով Հայաստանի տարբեր շրջաններ կատարած իրենց այցելութիւնները, Օգոստոս 18-ին ժամանած էին Իջևան, ուր Տէր-Պետրոսեանի գլխավորութեամբ, եկած էին այցելելու անազատութեան մէջ գտնուող «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի հարազատներուն: Այս առթիւ, առաջին նախագահը պատասխանելով լրագրողներու հարցերուն ըսաւ. - «Յեղասպանութիւնը տուին, Ղարաբաղն էլ կը տան: Տուած-վերջացրած է արդէն»:

«Լեւոնային Ղարաբաղը վերջնականապէս չկորցնելու միակ տարբերակը իշխանութիւնների հեռացումն է: Պէտք է հեռանայ այս մարդը [Սերժ Սարգսեանը], ինչքան հնարաւոր է շուտ»,- ըսաւ առաջին նախագահը:

Լեւոն Տէր-Պետրոսեանի կարծիքով, որ այս վիճակը ժամանակաւոր է, քանի որ հասարակութիւնը իր քաղաքականութիւն վերադառնալով՝ նախկինը չէ:

«Արդէն փոխուել է», - ըսաւ ան: - «Իմ վերադառնալով ստեղծուել է ժողովրդական քաղաքացիական հզօր հասարակութիւն: Շատ հզօր բան է փոխուել, այնպիսի բան, որ այլեւս վերացնել հնարաւոր չէ»:

Իջևանցիները, «Լեւոն նախագահ» վանկարկումներով ճամբայ դրին ՀԱԳ-ի ներկայացուցիչներուն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԵՄԻՆԱՐ

Օգոստոս 13-ին Երեւանի «Մարիթ-Արմինիա» հիւրանոցէն ներս տեղի ունեցաւ ՄԴՀԿ «Մարգիտ Տիրուհի» Ուսանողական-Երիտասարդական Միութեան կազմակերպած՝ «Հայ-թրքական յարաբերութիւններ. անցեալ եւ ապագայ» խորագիրը կրող սեմինար-քննարկում, որուն հրահրուած էին փորձագէտներ, ինչպէս նաեւ այլ կուսակցութիւններու երիտասարդական թեւերու ներկայացուցիչներ:

Քննարկման ընթացքին «Հայ-թրքական յարաբերութիւններու ընկալումը Սփիւռքի տարածքին» նիւթին շուրջ զեկոյցով հանդէս եկաւ ՄԴՀԿ Կենտրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Սեդրակ Աճեմեան: Խօսելով Հայ-թրքական սահմանի բացման մասին, ան զարմանք յայտնեց, թէ ինչու՞ Հայաստան կը խօսի թուրքիոյ հետ սահմանը բանալու մասին, երբ թուրքիա՝ ինքն է որ փակած է սահմանը: «Ինչու՞ Համար մենք մեզի համար աւելի նեղ քաղաքական իրավիճակ կը ստեղծենք, - հարց տուաւ Ընկ. Աճեմեան, աւելցնելով, որ այս պահուն Հայաստանը պատրաստ չէ Հայ-թրքական սահմանի բացման եւ կրնայ յայտնուել շատ վտանգաւոր իրավիճակի մէջ:

«Նախ Հայաստանը պէտք է «գինուել» եւ պատրաստուի, որպէսզի նման երեւոյթներու առջեւ կարողանայ դիմադրել, - յայտնեց կուսակցութեան ատենապետը ու աւելցուց. «Այդ սահմանը թող փակ մնայ, Հայաստանը պէտք է մտածէ իր Սփիւռքի մասին, Սփիւռք-Հայրենիք կապի ամրապնդման եւ սնտեսական մեր վիճակը



Հայ-թրքական յարաբերութիւններուն նուիրուած քննարկումի ընթացքին ելոյթ կ'ունենայ ՄԴՀԿ ատենապետ՝ Ընկ. Սեդրակ Աճեմեան

բարելաւելու մասին»:

Ս. Աճեմեանի խօսքերով, Հայաստան պէտք է մտածէ ոչ թէ նեղ խնդիրներ լուծելու ուղղութեամբ, այլ համահայկական խնդիրները լուծելու: Ան կոչ ըրաւ ստեղծելու համահայկական մարմին, ուր կիրականացուին լուրջ աշխատանքային ծրագրեր եւ հոն ընդգրկուած ամէն մէկ կազմակերպութիւն, ոչ թէ իր խօսքը ըսելու համար ներկայ կը գտնուի, այլ՝ պատասխանատու կ'ըլլայ իր կատարած քայլերուն համար:

Ապա անդրադառնալով դարբանական հարցին՝ բանախօսը ըսաւ, որ Ղարաբաղ ինքը պէտք է ստանձնէ խնդրի կարգաւորումը, այլ ոչ թէ Հայաստանի իշխանու-

թիւնները: Ընկ. Աճեմեան դէմ արտայայտուեցաւ նաեւ Լեւոնային Ղարաբաղի հարցի փոխզիջումային տարբերակով կարգաւորելուն եւ վստահեցուց, որ նոյնպիսի դիրքորոշում ունի նաեւ սփիւռքահայացութիւնը: «Մենք մեր պատմական տարածքները չենք ազատագրել, մենք ուրիշի հողը չենք գրաւած, որ այժմ ալ զիջինք», եզրակացուց Հնչակեան Կուսակցութեան ատենապետը:

Դատելով հնչած միւս բոլոր ելոյթներու բովանդակութենէն եւ արտայայտուած տեսակէտների շեշտադրումներէն՝ կարելի է հետեւցնել, որ Հայաստանի արտաքին

Շարք էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՏԵՐՈՒՆ ՄԷՋ ՏԱԿԱԻՆ ԿԱՆ 21 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ

Թէեւ համաներման հիման վրայ 301 դատաւարտեալներ ազատ արձակուած են, սակայն Հայաստանի քաղաքական բանտարկեալներու եւ հալածեալներու պաշտպանութեան կոմիտէի համաձայն, Հայաստանի բանտերուն մէջ դեռ 21 քաղբանտարկեալներ կան: Ըստ կոմիտէի, այս փաստը ցոյց կու տայ Հայաստանի մէջ յայտարարուած համաներման ողջ խեղդատակութիւնը:

«Համաներման տեքստն այնպէս ձեւակերպուեց, որպէսզի հնարաւորինս աւելի շատ մարդիկ շարունակեն մնալ բանտերում: Դա, կարծում եմ, առաջին գնահատականն է, որ պէտք է տալ համաներմանը», - ըսած է կոմիտէի անդամ, իրաւապաշտպան վարդան Յարութիւնեան:

Ըստ Յարութիւնեանի այդ մարդկանց բանտի մէջ պահելու պատուէրը երկրի բարձրագոյն իշ-

խանութեանը տուած է, իսկ իրականացման ձեւերը տարբեր են: «Ճշգրտող օրինակ է Սարգիս Հացպանեանի գործը: Բոլորը գիտեն, որ նա եղել է ազատամարտի մասնակից: Ո՛րքէ մէկը դա կասկածի տակ չի առնում, նոյնիսկ ամենավերին իշխանութիւնները: Բայց պահանջում են Արդարադատութեան նախարարութիւն ներկայացնել տեղեկանք առ այն, որ նա եղել է ազատամարտի մասնակից»:

Յարութիւնեան կը յայտնէ որ, բոլոր իրաւասու մարմինները կը խուսափին տալ այդ տեղեկանքը, որպէսզի Հացպանեան Ազատ արձակուի:

Քաղաքական բանտարկեալներու եւ հալածեալներու կոմիտէի համակարգող Կարապետ Ռուբինեանի գնահատականով, իր անմարդկային դէմքը իշխանութիւնը

Շարք էջ 2

ԲԱՅԱՅԱՅՏՈՒԱԾ ԵՆ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պոլսահայ լրագրող Հրանդ Տինքի սպանութեան վերաբերեալ ի յայտ եկած են նոր մանրամասնութիւններ, որոնք լոյս կը սփռեն կատարուած ոճրագործութեան վրայ:

Թրքական լրատուամիջոցները կը հաղորդեն որ, սպանութիւնը կազմակերպած է գաղտնի հետախուզութեան ծառայութեան «JITEM» ստորաբաժանումը, որու գոյութեան փաստը մշտապէս հերքուած է թուրք պետական պաշտօնեաներու կողմէ: Այս իրողութեան մասին կը վկայէ փաստաթուղթ մը, որը ներառուած է «էրզնէկոնի» անուամբ ծանօթ թրքական աղմկայարոյց գործի երրորդ պաշտօնական մեղադրանքի մէջ:

Փաստաթուղթի համաձայն, որ գտնուած է իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան նախկին երեսփոխան թուրքահայ Չյումէզի համակարգչին մէջ, Տինքի սպանութեան ետին կանգնած են ազգութեամբ քուրդ ետևսոֆ Զիյադը, պաշտօնաթող գորավար Վէլի Քիւււլը եւ Ազգային Ոստիկանութեան ստորաբաժանումը: Չյումէզը, Քիւււլը եւ Զիյադն այժմ մեղադրուած են «էրզնէկոնի» գործով:

Փաստաթուղթի մէջ կը մէջբերուի փրոֆեսոր Էմին Գիւրսէս, որ նոյնպէս մեղադրուած է «էրզնէկոնի» գործով եւ գնդապետ Մուսթաֆա Տյունմեզի հեռաձայնային խօսակցութեան ձայնագրութիւնը: Համաձայն այդ ձայնագրութեան՝ Գիւրսէս հետեւեալ խօսքերը կ'ըսէ Տյունմեզին. «Հրանդ Տինքի սպանութիւնը լաւ նախազգուշացում էր այդ կարգի մարդոց համար»:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՍԵՂՐԱԿ ԱՃԵՍԵԱՆԻ ԸՆԹ
ՍՓԻՒՔԸ «ՎԻՐԱԽՈՐ» Է ԸՇ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԱՐԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ**

**ԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ
ՀԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ**

Օգոստոսի 8-ին Հայաստանի Ժամանած Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ Սեղրակ Աճեմեանը հանդիպել է վարչապետ Տիրգրան Սարգսեանին: Հանդիպման ընթացքում, ինչպես կառավարության տարածած հաղորդագրության մէջ էլ ասուում, կողմերը քննարկել են Հայաստանի տնտեսական զարգացմանը, գործարար միջավայրի բարելավմանն առնչուող հարցեր ու Հայաստանի տնտեսության մէջ Սփիւռքի առաւել լայն ներգրավման հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ ՄԴՀԿ-ի հետ երկխօսութեան ու համագործակցութեան հնարաւոր ուղիները:

Անդրադարձ էր կատարուել նաեւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչմանն ու Արցախի հիմնահարցի արդարացի կարգաւորմանը: ՄԴՀԿ ԿՎ ատենապետի հանդիպումը իշխանութեան ներկայացուցչի հետ տարաբնույթ մեկնաբանութիւնների տեղիք տուեց քաղաքական շրջանակներում, որոնց վերաբերեալ փորձեցինք մեկնաբանութիւն ստանալ պրն. Աճեմեանից:

- Պրն. Աճեմեան, ի՞նչ նպատակ ունի ձեր հանդիպումը Տիրգրան Սարգսեանի հետ, դուք նախորդ տարի էլ էիք Հայաստան ժամանել, սակայն կառավարութեան դեկավարի հետ լրբել հանդիպում տեղի չունեցաւ: Այս տարին առանձնապատճառ էլ ինչ-որ բանով:

- Նախ ասեմ, որ այդ հանդիպումը փորձութեամբ չէր իրականացվում էր: Առաջիկայում՝ Սեպտեմբերի 26-ին, պէտք է տեղի ունենայ ՄԴՀԿ-ի հերթական համագումարը, որը որոշել ենք հրաւիրել Մայր Հայրենիքում: Մեր վերջին համագումարը Հայրենիքում եղել է 1995 թ.ին, Լեւոն Տէր Պետրոսեանի օրօք: Որպէս հայ առաջին աւանդական կուսակցութիւն՝ ՄԴՀԿ-ի համագումարը մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում հասարակութեան շրջանում եւ յատկանշական է, որ բոլորը, անկախ քաղաքական պատկանելիութիւնից, պէտք է հրաւիրուեն այդ համագումարին: Ուստի՝ մեր հանդիպման նպատակն այն էր, որ վարչապետին եւս հրաւիրենք համագումարի բացմանը, որ գալ ու իր սրտի խօսքն ասի: Եթէ նա ընդունի հրաւերը, շատ լաւ, եթէ ոչ՝ իր գործն է:

- Պրն. Աճեմեան, բոլոր դեպքերում, ձեր հանդիպումը վարչապետի հետ շատերին տարօրինակ թուաց եւ ասի թէ ինչու՝ ՍԴՀԿ հայաստանեան կառոյցը ընդդիմութեան Հայ Ազգային Կոնգրեսի անդամ կուսակցութիւն է, սակայն նոյն այդ կուսակցութեան կենտրոնական վարչութեան ատենապետը յարաբերում է իշխանութեան հետ: Նման դիտարկմանն ինչպէ՞ս կ'արձագանգէք: Արդե՞ք այդ այցելութեանը ինչոր բան է փոխուել ՍԴՀԿ-ի քաղաքական կողմնորոշման մէջ:

- Միանշանակ ոչ: Նման երեւոյթ չկայ, նախեւառաջ մենք՝ որեւէ երկրի վարչապետները, այս պարագայում էլ Հայաստան

նում գտնուող վարչապետները, իր տեղական քաղաքականութեան մէջ անկախ է: Անշուշտ կուսակցութիւնն ունի իր համագումարներով կայացրած որոշումների ուղեգիծը, եւ այդ ուղեգիծին բոլորը պէտք է ենթարկուեն: Բայց այս պարագայում ես ոչ մի քաղաքական կուրսի փոփոխութիւն կամ տարբերութիւն չենք նշմարել մեր կուսակցութեան քաղաքական գծի մէջ, եւ իմ հանդիպումն էլ վարչապետի հետ՝ բնաւ չի կարող նման բան ենթադրել:

-- Իսկ վարչապետին ձեր համագումարին հրաւիրելը կարելի՞ է դիտել որպէս իշխանութիւն-ընդդիմութիւն մերձեցմանը միտուած քայլ, յատկապէս, որ վարչապետը նման փորձ արդէն իսկ ունի. մէկ տարի առաջ հրաւիրուած էր «Ժառանգութիւն» կուսակցութեան համագումարին, եւ ինչպէս ինքն ասաց՝ եկել էր կամրջելու իշխանութեան ու ընդդիմութեանը:

- Եթէ նման երեւոյթ ստեղծուի, Հնչակեան կուսակցութիւնը բաւարարուած կը զգայ իրեն: Որովհետեւ այդ մերձեցումը, կարծում եմ, որ շահաւէտ կը լինի մեր երկրի, պետականութեան համար, եւ մի քիչ էլ ժողովրդին ուշադրութիւն դարձնելու քաղաքականութեան հիմքը կը դրուի այդպիսով: Սակայն դա երկուստեք՝ իշխանութեան եւ կոնգրեսի որոշելու խնդիր է: Մենք՝ որպէս կուսակցութիւն, գործակից ենք կոնգրեսին՝ ի դէմս Լեւոն Տէր Պետրոսեանի: Ասեմ նաեւ, որ մենք արտասահմանեան մեր կառույցներով կոնգրեսի մասին չէ, որ այսօր խօսում ենք՝ այլ Լեւոն Տէր Պետրոսեանի, որովհետեւ նրա հետ մեր կապը նոր չէ, ու պէտք է պահպանենք այնքան ժամանակ, քանի դեռ մենք լուրջ քաղաքական գործակցութիւն ունենք: Բայց ասեմ, որ մենք որեւէ խնդիր չունենք հանդիպել այս կամ այն գործչի հետ, եթէ այդ հանդիպումը ի նպատակ մեր երկրի շահի ու պետականութեան է:

- Իսկ վարչապետն ինչպէ՞ս արձագանքեց ձեր դիտարկութեանը կապուած Սփիւռք-Հայաստան միասնական քաղաքականութեան բացակայութեան հետ, յատկապէս, որ հանդիպման ժամանակ քննարկել էք հայրենիք-սփիւռք համագործակցութեան հարցը:

- Շատ, այսպէս ասած՝ վերնազրեք բացուեցին խօսակցութեան ժամանակ, բայց մենք լուրջ փոխադարձ յարաբերութեան մէջ համաձայնութեան չեկանք: Մասնաւորապէս շօշափեցինք Ցեղաս-

պանութեան հարցը, եւ դա միակ խնդիրն է, որով գինուած է ամբողջ Սփիւռքը: Այս օրերին սփիւռքահայութիւնը վերադարձ է Հայաստանի կողմից վարուող ոչ միասնական քաղաքականութեան պատճառով: Չէ՞ որ մենք անընդհատ հայրենի իշխանաւորների շուրթերից լսում ենք միասնաբար գործելու, մէկ ազգ, մէկ տուն լինելու, մեր երկրի արտաքին խնդիրներին միասնաբար լուծում տալու մասին խօսքեր, բայց դժբախտաբար, իրականութիւնն այլ բան է փաստում: Մասնաւորապէս՝ վերջին շրջանում տեղի ունեցած զարգացումները՝ հայթրքական յարաբերութիւնների հետ կապուած, խորը նիհիլիզմ են առաջացրել Սփիւռքում: Ներկայիս Սփիւռքը համակուած է Ցեղասպանութեան խնդրի լուծմամբ եւ այդ ուղղութեամբ ունի յատկաշահուած ռազմավարութիւն: Մինչդեռ Հայաստանի նախագահը այդ ռազմավարութեան կոնցեպտիան դէմ գնացող խնդիր բարձրացրեց՝ կապուած Ցեղասպանութեան հարցն ուսումնասիրող պատմաբանների յանձնաժողով ստեղծելու հետ, եւ այն յայտարարութիւնը, որը ստորագրուեց Ցեղասպանութեան տարելիցի նախօրէին: Այսօր արար աշխարհը զարմացած է դրանից, եւ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչած պետութիւնների առաջ մենք տկար դուրս եկանք: Մենք պէտք է կամաց-կամաց դուրս գանք այդ տկարութիւնից, իսկ դրա համար յայտարարութիւնները, որոնք այդ կապակցութեամբ արուում են, պէտք է ազգովի արուեն եւ ոչ թէ անհատական մակարդակի: Պէտք է համազգային մարմնով նստենք եւ որոշումներ կայացնենք, եւ ոչ թէ միայն ՄԴՀԿ-ն կամ Դաշնակցութիւնը, կամ մէկ այլ կուսակցութիւն, որովհետեւ Ցեղասպանութեան հարցը լոկ նեղ կուսակցական, նեղ քաղաքական հարց չէ, այլ՝ ազգային: Մենք փորձեցինք ասա սա բացատրել պարոն վարչապետին, եւ մեր առաջ քաշած շեշտադրումներից շատերին նա հաւանութիւն տուեց: Յատուկ ուզում եմ ընդգծել նաեւ, որ եթէ Ցեղասպանութեան հարցը օրակարգից դուրս գալ, ապա Սփիւռքը կարող է փլուել, ինչ որ նոր իրավիճակներ, երեւոյթներ ստեղծուեն, որպէսզի կարողանանք հայութեանը հայ պահենք արտասահմանեան հողի վրայ:

- Պրն. Աճեմեան, ժամանակ առաջ հայ աւանդական կուսակ-

ցութիւններից մէկը ՀՊԴԿ-ը պառակտուեց, ինչու, ըստ շրջանառուող լուրերի, մեծ է ՀՀ վարչապետի ներդրումը: Ի՞նչ էք կարծում՝ ձեր կուսակցութեան նկատմամբ վարչապետի կողմից ցուցաբերուած հետաքրքրութիւնը հնարաւոր է նման հետաքրքրութեանը: Այլ կերպ ասած՝ ՍԴՀԿ-ն ինչու-ճիտեմ ունի՞ դիմակայել հնարաւոր պառակտումներին:

- Մենք ցաւում ենք, որ պառակտում է տեղի ունեցել այն կուսակցութեան մէջ, որին մենք համարում ենք քոյր կազմակերպութիւն: Բայց ես ձեռնպահ կը մնամ այդ պառակտումը վարչապետին վերագրելու հարցում, դա կուսակցի լինի իմ կողմից: Յաւոք, պառակտումն արդէն կայացած փաստ է, եւ ՀՊԿ կենտրոնական վարչութիւնը ամէն ինչ անում՝ միաւորելու կուսակցութիւնը: Եթէ ՄԴՀԿ-ն կարող է այդ հարցում օգտակար լինել, ապա մենք կը ստանձնենք այդ առաքելութիւնը:

- Ձեր խօսքերից հետեւում է, որ ՍԴՀԿ-ն ամուր կառոյց է եւ անհնարաւոր չի լինի պառակտել, տրոհել, եթէ նոյնիսկ նման ցանկութիւն ունենայ Հայաստանի որեւէ բարձրաստիճան պաշտօնեայ:

- Մենք, իսկապէս, գնալով ամբողջում եւ կուռ ենք դառնում, եւ մեզ տրոհելը հեշտ չի լինի՝ անգամ մեծ ցանկութեան պարագայում: Տա Աստուած, ի հարկէ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԸՆԶԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱՐԻԻԷՆ ՍՈՒՆՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

3 ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՏԵՐՈՒՆ ՄԷՋ ՏԱԿԱԻՆ ԿԱՆ
21 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ**

Շարունակուած էջ 1-էն
ամենացայտուն եւ արտառոց կերպով ցոյց տուին Արման Բաբաջանեանին առնչուող գործի ընթացքին, որը «ձայրից-ծայր քաղաքական հետապնդում է, նուաստացում, խոչտանգում»:
Կ. Ռուբինեան կոչ ըսաւ Վագրգէն Մանուկեանի ղեկավարած հանրային խորհուրդին՝ քննարկել համաներման արդիւնքները եւ կրկին

դիմել Սերժ Սարգսեանին՝ այս անգամ արդէն համաներման կիրատ գործը աւարտելու կոչով: Ան տեղեկացուց, որ ընդատակ գտնուող իրաւունքները Սուրբիսեանն ու վերաբ Մանուկեանը չվերադարձան, որովհետեւ տեսան, որ միւս վերադարձողները, հակառակ հասարակութեան սպասումներուն ու ԵՄԽՎ կոչներուն, իրաւապահներուն ներկայանալով՝ կ'ենթարկուին քրէական հետապնդման:

ՐԱՅԱՍԱՆ

ՎԱՅԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ. «ԵՍ ՀԱՄՈՋՈՒԱԾ ԵՄ, ՈՐ ԱԴԻԲԵԶԱՆԻ ԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՏԵՐԱԶՍԵԼ ԵՒ ՅԱՂԹԵԼ»

«Հայաստանում արդիւնաւէտ եւ արդար կը լինէր կառավարման համակարգը, եթէ լինէր երեք հարթութիւններում՝ հոգեւոր, պետական եւ տնտեսական», - ասաց ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար, ՄԴՀԿ Կենտրոնական վարչութեան ներկայացուցիչ Վասան Շիրխանեանը «Արդարութիւնը ռազմական անվտանգութեան երաշխիք» թեմայով կազմակերպած կլոր սեղանի ժամանակ:

Նրա խօսքերով, ցաւոք Հայաստանում այս բոլոր երեք ոլորտները միաձուլուել են մեկի մէջ եւ Հայաստանում ստեղծուել է պետութիւն-կոռպորացիա:

«Հայ դիւանագիտութիւնը, Հայաստանի իշխանութիւնը առաջին օրից պէտք է աշխատէր կարգաւորման խնդիրը դնել ազատագրական պայքարի եւ նրա արդիւնքի վրայ: Հայաստանը դեռ պէտք է վերադառնայ հակամարտութեան ծագման պատճառին, այնուհետեւ շարունակի բանակցութիւնը, քանի որ ցանկացած հակամարտութիւն լուծուել է՝ վերադառնալով ծագման պատճառին, արդիւնքին: Սա է միակ ճանապարհը ճիշդ բանակցային գործընթացում», - հաւաստիացրեց Շիրխանեանը:

Նրա կարծիքով այսօր պէտք է համախմբել ազգային մտածողութիւն եւ ազգային պետութիւն կառուցելու հաւատամք ունեցող հայութեանը, ակտիվացնել ցեղասպանութիւնը ճանաչելու գործընթացը, վերադարձնել Հայաստան-Ռուսաստան յարաբերութիւնների վստահութեան լիարժեք դաշտը:



ՄԴՀԿ Կենտրոնական վարչութեան ներկայացուցիչ Վասան Շիրխանեան

հուլիսին լիարժեք դաշտը:

«Վստահութեան դաշտը այդ իրաւական փաթեթի տակ այսօր այնքան էլ յստակ չէ, որովհետեւ եղան գործողութիւններ Հայաստանի իշխանութիւնների կողմից, որոնք դաշնակցին վայել չէին, օրինակ՝ Սահակաշվիլուն շքանշանով պարգևատրելը», - նշեց պաշտպանութեան նախկին փոխնախարարը:

Նա յուսով է, որ վաղը, եթէ պատերազմ լինի Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ, Ռուսաստանը Հայաստանի հետ կը լինի, ինչը ինքը բացառու է:

«Ես համոզուած եմ, որ Ադրբեյջանի դէմ Հայաստանը կարող է պատերազմել եւ յաղթել», - եզրափակեց Շիրխանեանը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՅԳՈՒՄ ԿԸ ՏԵՂԱԴՐՈՒԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27»-Ի ԶՈՐԵՐԻ ՅՈՒՇԱԿՈՐԸ

«Ա.Զ.Ա.Տ.Ո.Ի - ԹԻԻՆ ՌԱՏԻՕ»: 1999 թուականի «Հոկտեմբերի 27-ի 10-ամեայ տարելիցի օրը Ազգային ժողովի այգում կը բացուի ահաբեկչութեան գոհների յուշակոթողը:



«Որոշում է կայացուել Ազգային ժողովի այգում նախկինում տեղադրուած յուշաքարի փոխարէն տեղադրել մշտական յուշակոթող», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Ազգային ժողովի նախագահի մամուլի խօսնակ Նաիրի Պետրոսեանը:

Նրա խօսքով, Հովիկ Աբրահամեանի կարգադրութեամբ ստեղծուած յանձնաժողովը 1999 թուականի հոկտեմբերի 27-ի գոհների յիշատակին նուիրուած կոթողի կապակցութեամբ երկու աշխատանքային նիստ է գումարել: 14 անդամներից բաղկացած յանձնաժողովը ղեկավարում է խորհրդարանի խօսնակ Հովիկ Աբրահամեանը, տեղակալը մշակույթի նախարարն է:

Հոկտեմբերի 27-ի ահաբեկչութիւնից յետոյ ստորագրուել էր երկրի նախագահի հրամանագիր, որով յանձնարարուել էր Մաշտոցի պողոտայում տեղադրել Կարէն Դեմիրճեանի արձանը: Արձանը մինչեւ օրս տեղադրուած չէ:

Կարէն Դեմիրճեանի իրաւաջողորդ՝ Ստեփան Դեմիրճեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում յայտարարեց, թէ «որոշ մարդիկ շարունակում են վախենալ անգամ Կարէն Դեմիրճեանի յիշատակից»:

«Ամէն ինչ արուած է յիշատակը մոռացութեան տալու համար: Ես խօսում եմ փաստերով: Փաստ է, որ 10 տարի է [անցել], իսկ յուշարձանի հարցը լուծուած չէ: Սա պարզապէս ամօթ է այս իշխանութեան համար»:

«Անցեալ տարի քաղաքապետարանը յայտարարեց մրցույթ, սակայն որեւէ մէկը յաղթող չճանաչուեց», - շարունակեց նա: - «Եւ այդպէս էլ այդ հարցը մնաց Հարցը պէտք է լուծուի՝ կա որոշում: Եւ սա պետութեան արժանապատուութեան հարցն է»:

«Անկախ նրանից, թէ երբ կը տեղադրուեն «Հոկտեմբերի 27-ի գոհների յիշատակի յուշարձանները, անհրաժեշտ է լիարժեք բացայայտել այդ ոճրագործութիւնը», - յաւելեց Ստեփան Դեմիրճեանը: - «Ոչ միայն յուշարձաններով, կոթողներով պէտք է յարգել գոհների յիշատակը, այլ նաեւ պէտք էր լիարժեքօրէն բացայայտել այդ ոճրագործութիւնը, պատասխանատուութեան ենթարկել կազմակերպիչներին: Իսկ այն, որ կազմակերպիչներ եղել են, կարծում եմ, քչերի մօտ է կասկած առաջացնում»:

«ԲԶՆԻ»Ն ԱՇԽԱՏՈՒՄ Է, ԻՍԿ ՍՈՒՔԻԱՍԵԱՆՆԵՐԸ ԴԻՄՈՒՄ ԵՐԱԴԱՏԱՐԱՆ

Մինչ Սուքիասեանների ընտանիքը դիմում է Եւրադատարան՝ «ԲՂՆԻ» հանքային ջրերի գործարանի կրած բարոյական ու նիւթական վնասը գնահատելով մօտ 124 միլիոն եւրօ, «ԲՂՆԻ» հանքային ջրերի գործարանն արտադրանք է թողարկում: Գործարանի սնանկութեան գործով կառավարիչ Արսէն Զիկչեանը յայտարարել է, որ Օգոստոսի 8-ից արդէն արտադրանք է թողարկուել, ու արդէն մօտ 40 հազար շիշ «ԲՂՆԻ» արտադրուել է: Ըստ Զիկչեանի՝ այս պահին գործարանում աշխատում է 98 մարդ:



որ այդ տուգանքները, որ դրուել են ընկերութեան վրայ, ապօրինի են, եւ չի պատրաստուել մուծել այդ գումարները:

Յիշեցնենք, որ ՍԻԼ-ի հիմնադիր խաչատուր Սուքիասեանի դէմ հետապնդումներ սկսուեցին, երբ նա յայտարարեց առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակցելու իր որոշման մասին: «ԲՂՆԻ» գործարանը վերցրին գործարարի ձեռքից, եւ 2009թ. Փետրուարին աճուրդի արդիւնքում գործարանը գնեց գործարար, Աժ պատգամաւոր Ռուբէն Հայրապետեանը: «ԲՂՆԻ» գործարանի տնօրինութիւնը, սակայն, վիճարկեց աճուրդի օրինականութիւնը: Այնուհետ ընկերութիւնը բողոքարկեց դա դատարանում, եւ դատարանը բաւարարեց հայցը՝ սնանկ յայտարարելով գործարանը:

ՍԻԼ-կոնցեռնից NEWS.am-ին յայտնեցին, որ իրենց ընկերութիւնը կապ չունի «ԲՂՆԻ»-ի նոր արտադրանքի հետ: «Այս պահին մեր հայցը մօտ մէկ շաբաթ է՝ մտել է Եւրադատարան», - յայտնեցին ՍԻԼ-կոնցեռնի մամուլի ծառայութիւնից:

Ի դէպ, Զիկչեանը նաեւ նշել էր, որ ցանկացած ժամանակ հիմնադիրը կարող է իր գումարը մուծել, պարտատէրերի պահանջները բաւարարել եւ առողջացնել հիմնարկը:

ՍԻԼ-կոնցեռնը համարում է,

տագրուած տարածքների ամբողջականութիւնը վտանգելու եւ երկրի պաշտպանական համակարգը ոչնչացնելու գնով իշխանական լծակները եւ տնտեսական ապօրինի մենաշնորհային արտօնութիւնները պահպանելու անիրագործելի մտադրութիւնից», - նկատել է Շուշիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատարը:

ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԱՐՅԱԽԻ ԽՆԴՐԻ ՈՉ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԼՈՒԾՄԱՆԸ»

Հայ-ադրբեյջանական հակամարտութեան կարգաւորման ներկայ գործընթացը եւ վերջին զարգացումները ուղղակիօրէն վտանգում են Արցախում բնակուող հայերի ֆիզիկական անվտանգութիւնը, ՀՀ, Արցախի՝ ազատագրուած մեր Հայրենիքի տարածքային ամբողջականութիւնը: «Միացում» ազգային նախաձեռնութեան նախաձեռնող խմբի անդամ Ժիրայր Սէֆիլեանը ողջունել է «Արցախի Հանրապետութիւն» նախաձեռնութեան ստեղծումը եւ նշել, որ հայերի համար Արցախի խնդիր գոյութիւն չունի:



Ժիրայր Սեֆիլեան

են Արցախի խնդրի ոչ հայանպաստ լուծմանը, ուստի Արցախում բնակուող հայերը չեն կարող լուռ մնալ եւ համակերպուել այս իրողութիւններին: Հարցը վերաբերում է Հայրենիքին: Ով էլ լինի Արցախում ղեկավար, պարտաւոր է ենթարկուել Արցախում բնակուող հայերի կամքին»:

Ըստ Սէֆիլեանի՝ տարածքային նուազագոյն զիջումն իսկ հանգեցնելու է զինադարի բուն երաշխիքը հանդիսացող եւ Ատրպէյճանի ազդեցիկ նկրտումները զսպող ուժերի փխրուն փոխհաւասարակշռութեան խախտմանը, ներկայիս ռազմաքաղաքական անվտանգութեան համակարգի ամբողջական փլուզմանը եւ, դրանով իսկ, Ադրբեյջանի կողմից ռազմական գործողութիւնների վերսկսման անխուսափելիութեանը: «Հայաստանի որեւէ իշխանութիւն պէտք է իսպառ հրաժարուի Հայաստանի ազա-

«Մենք ունենք Արցախի բնակեցման եւ ազատագրուած տարածքների վերաբնակեցման խնդիր: Արտաքին աշխարհի եւ մեր հակառակորդների հետ բանակցելու ընթացքում կարող էինք ունենալ երկու հօր կուռնան: Այն է.

-Արցախը եւ ազատագրուած տարածքները պաշտպանում է հայ զինուորը, ինչը փորձում են ի չիք դարձնել այսօրուայ բանակցութիւնների արդիւնքում,

- ազատագրուած տարածքներում պէտք է բնակեցուէին Ադրբեյջանից գաղթած 100 հազարաւոր հայեր, ինչը ցաւօք չկատարեցին ոչ նախկին եւ ոչ էլ ներկայ իշխանութիւնները, բացառութեամբ Քաշաթաղի մասնակի բնակեցման», - նշել է ազատամարտիկը եւ յաւելել. «Սակայն այսօր Արցախի նկատմամբ վտանգները անթաքոյց երեւում են, եւ Հայաստանի իշխանութիւնները նպաստում

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏՈՒ ԵՐՈՒՏԱՍԱՐԴ ԺԱՄԱՆԱԿ ՖՈՒԹՊՈՒԼ Է ԽԱՂԱՅԵԼ ՅԱՅԵՐԻ ՅԵՏ

Օգոստոս 15-ի երեկոյեան Ռեջէփ Էրդողանը կառավարութեան հինգ անդամներին հետ միասին հանդիպել է Թուրքիայի ազգային ու կրօնական փոքրամասնութիւնների ներկայացուցիչներին հետ:

Հայ համայնքից աւելի քան մէկ տասնեակ ներկայացուցիչներ են մասնակցել հանդիպմանը: Պատուիրակութիւնը գլխավորել է Պոլսոյ հայոց պատրիարքարանի արքեպիսկոպոս Արամ Աթէշեանը: Հանդիպմանը հրաւիրուել է նաեւ Թուրքիայում գործող Հայաստանի միակ դիւանագետը՝ Սեւծովեան Տնտեսական Համագործակցութեան կազմակերպութիւնում Հայաստանի ներկայացուցիչ Կարէն Միրզոյեանը:

Հանդիպմանը հրաւիրել էր նաեւ Թուրքիայում հրատարակուող «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունեանը: Հեռախօսով նա «Ազատութիւն» ռադիոկայանին որոշ մանրամասներ պատմեց հանդիպման մասին:

«Բաւականին հետաքրքիր հանդիպում էր», - ասաց Գոչունեանը. - «Ինքը անդրադարձաւ այս վերջին շրջանում եղած զանազան ժողովրդավարական բարեփոխումներին: Ասաց, որ եթէ ներքին համակցութիւնը կարողանանք ամրապնդել, զարգացնել, երկիրը պիտի մի մեծ ուսուցանապահովի»:

Հանդիպումը կազմակերպել էին ոչ կառավարական մի շարք կազմակերպութիւններ: Արա Գոչունեանը ասաց, որ նրանց ողջոյնի խօսքից յետոյ էր դողանք մօտ 20 րոպէ էլոյթ է ունեցել:

«Նա անդրադարձաւ իր երիտասարդական տարիների յուշերին՝ նկատի ունենալով, որ երիտասարդական տարիներին ֆուտբոլ է խաղացել եւ ասաց, որ իր խաղացած ակումբում հայ խաղակից ընկերներ է ունեցել, այդպիսի մի դրուագ մէջ բերեց: Խօսակցութեանը շարունակութեանը ասաց, թէ իրենց իշխանութիւնը հենց առաջին փուլից բոլոր ինդիւստրիան համահաւասար կարեւորութեան»:



Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Էրդողան

Թիւն է ընծայել եւ երկրի մէջ բոլոր շրջանակներին եւ հասարակութեան բոլոր խաւերի նկատմամբ համահաւասար հեռուորութեան վրայ են», - պատմեց Գոչունեանը:

Թուրքիայի վարչապետը հանդիպմանն ասել է. - «Մեզ համար հնարաւոր է քայլեր անել, եթէ սպասենք ուրիշների խօսքերին»:

Նա ասել է, թէ երբ կառավարութիւնը 8 տարի առաջ իշխանութեան եկաւ, երեք հիմնական խնդիր դրեց. - «Մենք ասացինք, չենք ունենայ տարածաշրջանային, էթնիկ ու կրօնական խտրականութիւն: Մենք ջանքեր ենք գործադրում անարդարութիւնները վերացնելու համար»:


«Մեզ համար հիմա յատկապէս կարեւոր է յարգանքով ու սիրով գրկախառնուել այս երկրի բոլոր 71,5 միլիոնանոց ժողովրդին հետ», - յայտարարել է Էրդողանը:

Արա Գոչունեանի փոխանցմամբ, էրդողանը ասել է, թէ կառավարութիւնը փորձում է լուծել բոլորի հարցերը:

«Ընդհանրապէս շատ կառուցողական մտնեցմամբ խօսակցութիւն էր, որը բաւականին լայն արձագանք է գտել Թուրքիայի 21 միլիոն բնակչութեան մէջ, որ վարչապետի արտայայտութիւններում զգացում էր ամուր քաղաքական կամքի դրսեւորում, ինչը առաջիկայի վերաբերեալ ակնկալութիւնների եւ գործնական սպասելիքների առումով բաւական յուսադրող է, - կարծիք յայտնեց Թուրքիայում հրատարակուող «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունեանը:

ԱՐԴՈՒԼԱ ՕՋԱԼԱՆԸ ՅՐԱՊԱՐԱԿՈՒՄ Է ԲՐԴԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆ ԻՐ ՏԱՐԲԵՐԱԿ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Թուրքական մի շարք պարբերականներ տեղեկութիւններ են հրատարակել քրդական խնդրի լուծմանն ուղղուած «ճանապարհային քարտէզի» մասին, որի հեղինակն է Քրդական Աշխատակողական կուսակցութեան հիմնադիր Աբդուլա Օջալանը:



Քրդական Աշխատակողական կուսակցութեան հիմնադիր Աբդուլա Օջալան

1999 թուականից իմրալի կղզու բանտում գտնուող Օջալանի հեղինակած ծրագիրը մասամբ կրկնում է բարեփոխումների այն փաթեթը, որը, ըստ Թուրքական որոշ աղբիւրների, մշակել են էրդողանի կառավարութիւնում: Մասնաւորապէս, ըստ «Վաթան» օրաթերթի, երկու նախագծերում էլ առաջարկում է բարեփոխել Թուրքիայի Սահմանադրութիւնը, լուծարել Անկարային հաւատարիմ քրդերից կազմուած ջոկատները, որոնք Թուրքական բանակի հետ համատեղ 80-ականներ կէսերից պայքարում են Քրդական Աշխատակողական կուսակցութեան զինեայների դէմ:

Օջալանի նախագծով նաեւ առաջարկում է համաներում յայտարարել՝ քրէական պատասխանատուութեան չենթարկելով այն քրդերին, ովքեր գէնքը ձեռքին պայքարում են Թուրքական իշխանութիւնների դէմ: Օջալանը նաեւ առաջարկում է, որպէսզի Թուրքիայի քրդերն ու պաշտօնական Անկարան որոշակի փոխադարձ պարտաւորութիւններ ստանան:

Թուրքական մէկ այլ հեղինակաւոր պարբերական՝ «Ռադիկալ»-ը, մի շարք հատուածներ է մէջբերում Օջալանի ծրագրից: Քուրդանշատականների առաջնորդը մասնաւորապէս գրում է. - «Մի կողմից կը լինի Թուրքական պետութիւնը, մտայնութիւնը, որ չարմար եւ շահաւէտ է երկու երկրների միջեւ ստեղծել բոլորովին այլ յարաբերութիւններ, քան այն յարաբերութիւնները, որոնք առկայ են այսօր՝ վակուումային, թշնամական յարաբերութիւններ: Փորձագետը միաժամանակ կասկած յայտնեց առ այն, թէ արդեօք Հայաստանի Հանրապետութիւնը եւ Թուրքիան իսկապէս շահագրգռուած են նորմալ յարաբերութիւններ հաստատել. «հրաւէր է եղել Մոսկուայում, մի մարդու կողմից, ով դեռ այդ պահին ինքն էլ չգիտէր ինքը Հայաստանի նախագահ է, թէ ոչ, եւ դժուար է պատկերացնել, որ Թուրքիայի նախագահը ՀՀ էր եկել այդ հրաւէրի պատճառով»: Ըստ Սարգսեանի, ռուս-վրացական պատերազմէն յետոյ է, որ Թուրքիա իր հայեացքը դարձուց դէպի Ռուսաստան եւ նախաձեռնեց յարաբերութիւններ այդ երկրի հետ: «Ես կարծում եմ՝ այստեղ Հայաստան գոյութիւն չունէր եւ մինչեւ այսօր էլ գոյութիւն չունի: Այդ նախաձեռնութեանը արձագանգ եղաւ Արեւմուտքից, ամէն մէկն առաջ քաշեց իր գնահատականներն ու առաջարկները, եւ Թուրքիան սկսեց բանակցութիւններ գերպետութիւնների հետ: Մինչեւ այսօր էլ, իմ կարծիքով, Թուրքիան բանակցում է գերպետութիւնների հետ եւ դեռ

միւս կողմից՝ քրդական դեմոկրատական ազգը: Այս երկուսը փոխադարձաբար կը ճանաչեն միմեանց գոյութիւնը»:

Բացի այդ Օջալանը պաշտօնական Անկարային կոչ է անում պայմաններ ստեղծել «քրդերի կրթական իրաւունքները պահպանելու, քրդական պաշտամունքներից մի գոյութեան համար»: Օջալանը նաեւ առաջարկել է հնարաւորութիւն տալ քրդերին ստեղծելու սեփական զինուած կազմաւորումները՝ ներքին կարգուկանոնը պահպանելու նպատակով:

Օջալանի համոզմամբ, իր հեղինակած նախագիծը «նոր մօտեցում է քրդական խնդրին՝ գերծ բոլոր տեսակի կարծրատիպերից»:

«Ռադիկալ»-ը մէջբերում է Օջալանի հետեւեալ կարծիքը. - «Քրդական խնդիրը հնարաւոր է լուծել կէս տարում՝ եթէ Թուրք ազգայնականները, նախեւառաջ «Ազգայնական Շարժում» կուսակցութիւնը չխանգարեն այդ գործընթացին»:

Երկար կը շարունակի: Հայաստանի Հանրապետութեան հետ բանակցելու որեւէ ցանկութիւն Թուրքիան չի ունեցել եւ առ այսօր չունի»:

Մ.Սարգսեան նաեւ ըսաւ. - «Հայաստանին ասում են՝ հրաժարուիր քո ազգային խնդիրներից, որոնք խաղալիք են գերպետութիւնների ձեռքում: Հայաստանի Հանրապետութիւնը չի կարող դա անել, չի կարող հրաժարուել Յեղափոխութեան ճանաչումից եւ ԼՂ խնդրից, յանուն ինչի»: Բայց ի՞նչ կարող է Թուրքիային տալ, որը կը հետաքրքրի այդ երկրին»:

Ըստ Սարգսեանի՝ մենք պէտք է հասկացնենք Թուրքիոյ, որ մենք «ոչ թէ ոտքի տակ ընկած քար ենք, այլ մեզանից կարող ենք ներկայացնել շատ ձեռնառու գործընկեր: Դա մի օրում չի լինի, բայց մենք պէտք է այս ուղղութեամբ մտածենք, այլ ոչ թէ տեսնենք, գերպետութիւնները ինչ թուղթ են գցել, Մ. Սարգսեանը գնաց Թուրքիա, թէ ոչ: 20 անգամ կարող է գնալ եւ 20 անգամ էլ դատարկ վերադառնալ»:

Ըստ Սարգսեանի, հայ-թրքական յարաբերութիւններու հաստատման գլխաւոր նախապայմանը եղած թշնամանքը հանելն է, այլապէս «կարող էք սահմաններ բացել եւ ունենալ թշնամի՝ ձեր տարածքի ներսում գործող»:

ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՐԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ

Մարտնականութիւն էլ-էն

Քաղաքականութեան օրակարգի կարեւորագոյն հարցերէն մէկուն մէջ, Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները դիւանագիտական ֆիասկօ արձանագրած, եւ ինչպէս նկատեց քննարկման հրաւիրուած Ազգային Ժողովի պատգամաւոր «Ժառանգութիւն» կուսակցութեան անդամ՝ Ստեփան Սաֆարեան՝ «ֆուլթայլային դիւանագիտութիւնը վերածել է դիւանագիտական ֆուլթայլի», որ կ'առաջնորդուի հետեւեալ տրամաբանութեամբ՝ թէ ով աւելի շատ գնդակ կը խփէ հակառակորդի դարպասը: Իսկ այս՝ միանշանակ չի կրնար առաջնորդել երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններու կարգաւորման:

Իրիւի 22-ին Թուրքիայի հետ ստորագրուած յայտարարութիւնից յետոյ, այն ցոյց տուեց նաեւ հայկական կողմի իրական վերաբերմունքը Սփիւռքի նկատմամբ: Դա վերաւորական էր հայ ժողովրդի եւ Յեղասպանութեանը յաջորդած սերունդների համար»: Ըստ Կիրակոսեանի՝ հայ-թրքական յարաբերութիւնները աւելի ճիշդ կ'ըլլար անուանել հայ-ռուսական, քանի որ առաջին հերթին Ռուսաստանն է որ պիտի շահի Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բարելաւումէն:

ՌԱՀԿ-ի տնօրէնն ընդգծեց նաեւ, որ մինչեւ Հայաստանի մէջ ժողովրդավարական ինստիտուտները չզարգանան եւ մեր երկիրը ներքնապէս ուժեղ չըլլայ, չի կրնար դիմակայել Թուրքիային՝ որպէս հաւասարէ՝ հաւասարի:

ՌԱՀԿ-ի մէկ այլ փորձագետ՝ Մանուէլ Սարգսեան իր կարգին ըսաւ. - «Ո՛չ Հայաստանի Հանրապետութիւնում, ոչ էլ Թուրքիայում դեռ եւս չի հասունացել այն

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

ՎԱՆԻ ԱՂԹԱՄԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԷՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԶԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՐՄԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ



Հայ-թուրքական յարաբերութիւններում լուռութիւնը դեռ շարունակուում է: Այդ լուռութեան սկիզբը դրուեց այս տարի Ապրիլի 22-ի գիշերը Հայաստանի եւ Թուրքիայի արտգործնախարարների համատեղ յայտարարութեամբ եւ ճանապարհային քարտեզի ընդունմամբ: Լուռութիւնը մերթ ընդ մերթ խախտում է Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, որն ամէն անգամ կրկնում է գրեթէ նոյն բառերը. «Թուրքիան ցանկանում է կարգաւորել յարաբերութիւնները Հայաստանի հետ, տարածաշրջանում պէտք է խաղաղութիւն լինի»: Ինչպէս ցոյց է տալիս ժամանակը, այս խօսքերը ասուում են ուղղակի ասելու համար եւ գործնական ոչինչ Թուրքիան չի ձեռնարկում: Բացի այդ, Ահմեդ Դավութօղլուն չի վարանում բացայայտ ակնարկելուց, որ Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը կապուած է դարաբաղեան խնդրի լուծման հետ: Սակայն յայտնի է, որ դարաբաղեան խնդրի լուծումը չի տեղաւորում Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ ձեռք բերուած պայմանաւորուածութեան շրջանակում:

Մտենում է Հոկտեմբերը, այն ամիսը, երբ Թուրքիայի Բուրսա քաղաքում պէտք է տեղի ունենայ Ֆուտբոլի աշխարհի առաջնութեան նախընտրական փուլի Թուրքիա-Հայաստան պատասխան ֆուտբոլային խաղը: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հրահրով երկու երկրները ֆուտբոլային խաղը դիտելու համար երեւան ժամանած Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիլը հրահրել է Հայաստանի նախագահին Թուրքիա՝ պատասխան խաղը դիտելու նպատակով: Սակայն Անկարան՝ զգալով, որ երկկողմ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի սառեցման հետեւանքով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը կարող է չմեկնել Թուրքիա, սկսել է բոլորի ուշադրութիւնը հրահրել այլ բանի վրայ: Տուեալ դէպքում խօսքը վանայ լծի Աղթամար կղզում գտնուող ս. Խաչ եկեղեցու մասին է: Սուրբ Խաչի վրայ խաչ տեղադրուած է, եւ այն գործում է որպէս թանգարան: Թուրքական իշխանութիւնները, կարծես թէ այս հանգամանքը պահել են որպէս պահեստային տարբերակ՝ Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման սառեցման պայմաններում այն որպէս խաղաքար օգտագոր-

ծելու նպատակով: Վանի Աղթամար կղզու ս. Խաչ եկեղեցի այցելած Թուրքիայի պետնախարար Էգեմէն Բաղըշի յայտարարութիւնը զարմացրել է բոլորին: Մասնաւորապէս, նա առաջարկել է մինչ Թուրքիա-Հայաստան խաղը, երբ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը կը ժամանի Թուրքիա, Աղթամարի ս. Խաչ եկեղեցու վրայ խաչ տեղադրել, եւ այն վերաբացել կրօնական արարողութիւնների համար: Վանի Աղթամար կղզուց վերադառնալիս, Թուրքիայի պետնախարար Էգեմէն Բաղըշը ասել է. «Աթէնքում մի մզկիթ տեսայ, որը կողպուած էր: Դրանից շատ նեղուեցի ու հիմա նոյնպէս նեղուեցի, երբ տեսայ Աղթամարի եկեղեցին այս վիճակում: Ինչ ցաւալի է, այնպէս է: Մի՞թէ Աղթամարը այս հողերի հարստութիւնը է: Եւրոպայում մզկիթներ են բացում որպէս աղօթատեղի, ինչ է լինում: Իսկ Աղթամարում ինչո՞ւ է արգելուած: Այս ինչ վիճակ է: Փակել հայկական սահմանը, արգելել քրդերին, դէ յոյներն էլ վատն են: Տարիներով սարսափ ֆիլմի մէջ ենք ապրել: Կոմունիզմ է գալիս՝ փակէք սովետական սահմանը, ֆունդամենտալիզմն է գալիս՝ փակէք Իրանի հետ սահմանը, ահաբեկչութիւն կա՝ Սիրիայի սահմանին ականներ տեղադրէք, հայկական պահանջատիրութիւն կա, փակէք Հայաստանի սահմանը: Լաւ այսպէս ու՞ր ենք գնալու: Ահա այսպէս է ազգը փակուում աշխարհի առաջ: Ես հենց վանայ լծի կենտրոնում տեսայ, թէ ինչպէս է ազգը իր պատմութիւնը եւ հարստութիւնը զազանաբար ոչնչացնում: Կարծում եմ, ես տեսայ երկար տարիներ փնտրուող Վանայ լծի հրէշին: Այո, այդ երեւակայական հրէշը մենք ենք, քանի որ տարիներով մեր ազատութիւնը, հաւատքը, հարստութիւնները, պատմութիւնը ոչնչացնում ենք, այն էլ դաժանաբար»:

Այս ուղերձը լիովին հասկանալի է. միջազգային հանրութեան ուշադրութիւնը շեղել Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի սառեցումից: Սակայն Հայաստանում իրավիճակը ճիշդ գնահատուեց եւ համարժէք պատասխան եղաւ: Հայաստանում պաշտօնական այցով գտնուող Սերբիայի նախագահի հետ մամլոյ ասուլիսի ժամանակ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ Թուրքիա կը մեկնի բաց սահման-

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՍԿՍԵԼ ԵՆ ԿԱՍԿԱԾԵԼ

ԵԱԿ ՄՈ՞՞ արդէն նախկին համանախագահ Մեթիւ Բրայզան, ում անմիջական ջանքերով մշակուեցին եւ ի վերջոյ՝ համաձայնեցուեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հիմնարար սկզբունքները, շարունակում է կարեւոր բացայայտումներ եւ սենսացիոն յայտարարութիւններ անել ԼՂ հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացի վերաբերեալ:

Նախօրէին նա յայտարարել է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները մօտ են հակամարտութեան կարգաւորման շրջանակային համաձայնագրի ստորագրմանը: Յիշեցնենք, որ նախորդ շաբթ Մեթիւ Բրայզան յայտարարել էր, որ հակամարտութեան կարգաւորման բոլոր սկզբունքները հիմնաւորապէս համաձայնեցուած են: Յիշեցնենք նաեւ, որ մեր թերթը դեռեւս երկու շաբթ առաջ տեղեկատուութիւն է հրատարակել, ըստ որի՝ ԼՂ հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ փաստաթուղթ Մոսկուայում՝ Սարգսեան-Ալիեւ վերջին հանդիպման ժամանակ, արդէն ստորագրուել է, ինչը մինչ օրս չի հերքուել ոչ մի երկրի որեւէ գերատեսչութեան կողմից:

Ինչ վերաբերում է Բրայզային, ապա վերջինիս վրայ, ինչպէս ցոյց են տալիս իրադարձութիւնները, դրուած է արդէն ստորագրուած եւ առաջիկայում ստորագրուելիք փաստաթղթերի մասին ինֆորմացիա ապահովելու եւ Հայաստանի ու Ատրպէյճանի բնակչութեանը հակամարտութեան կարգաւորմանը նախապատրաստելու առաքելութիւնը: Թերեւս, հենց այս գործի շրջանակներում էլ Մեթիւ Բրայզան նախօրէին յայտարարել է, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին գտնում են, որ Հայաստանը պէտք է գրաւեալ տարածքները վերադարձնի Ատրպէյճանին: Բրայզան նաեւ շեշտել է, որ Օբաման, Մեդվեդեւն ու Սարկոզին իրենց այդ տեսակէտը արտացոլել են Յուլիսին արուած իրենց յայտնի յայտարարութեան մէջ: Այսինքն՝ եթէ ասուում է, որ աշխարհի երեք այնպիսի երկրների նախագահներ, ինչպիսիք են ԱՄՆ-ն, ՌԴ-ն եւ Ֆրանսիան, գտնում են, որ Հայաստանը պէտք է տարածքները յանձնի Ատրպէյճանին, ապա ակ-

նարկում է, որ հակամարտութեան կարգաւորման այն սկզբունքները, որոնք այսօր արդէն համաձայնեցուած են, եւ որոնցից մէկը տարածքների վերադարձն է, վայելում են երեք նախագահների անձնական հաւանութիւնը, ինչն էլ նշանակում է, որ այս գործը պէտք է իր աւարտին հասցուի:

Ի դէպ, Բրայզայի արած բացայայտումներն ու մանր արտահայտքները անարձագանք չեն մնում Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում: Այս օրերին Հայաստանում նոյնիսկ հնչել են տեսակէտներ, թէ Բրայզային Հայաստանում պէտք է «persona non grata» յայտարարել: Մինչդեռ, միամտութիւն կը լինի կարծել, թէ Բրայզան իր յայտարարութիւններում անձնական տեսակէտներ է արտայայտում: Նոյն տրամաբանութեամբ, ՀՀ-ում պէտք է «persona non grata» յայտարարել Օբամային, Մեդվեդեւին եւ Սարկոզին: Իրականում, Հայաստանում բազմաթիւ քաղաքական ուժեր համարձակութիւն չունեն բարձրաձայն յայտարարելու, որ այն, ինչին Սերժ Սարգսեանը համաձայնութիւն է տուել, ընդունելի չէ հայկական կողմի համար, համարձակութիւն չունեն Սերժ Սարգսեանին հարցեր տալու եւ նրանից պատասխաններ պահանջելու, ու ստիպուած կախուում են այս ամբողջ գործընթացում ոչինչ չորոշող եւ միայն յանձնարարութիւններ կատարող Բրայզայի վզից:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա Ղարաբաղից այս ընթացքում, թէեւ ընդհատումներով եւ անվստահ, սակայն պարբերաբար դժգոհութեան խօսք լսուել է: Այլ բան է, որ Ղարաբաղիներին ՀՀ եւ ԼՂՀ իշխանութիւնները պահում են կատարեալ մշուշի մէջ՝ այդպէս էլ նրանց հաշուետու չլինելով, թէ ինչպէս են պատրաստուում լուծել իրենց համար այդ ճակատագրական խնդրերը: Ի դէպ, նոյնպէս Լեռնային Ղարաբաղից դժգոհութեան ձայն է հնչել, եւ այն, ինչ ասել է ԼՂՀ ԱԳՆ ներկայացուցիչը, ցոյց է տալիս, որ հասունացող վտանգի մասին Լեռնային Ղարաբաղում սկսել են առնուազն կասկածել: Եթէ նրանք շարունակեն բարձրաձայնել իրենց կասկածների մասին, գուցէ դեռ որեւէ բան փրկելու շանս լինի:

ԱՆՆԱ Վ. ՅԱԿՈԲԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ների բացման դէպքում կամ ապաշրջափակման նախաշեմին:

Սրանից շատ չանցած Թուրքիայի Մշակույթի եւ տուրիզմի նախարարը՝ շրջելով Թուրքիայի կենտրոնական շրջաններով, հանդէս է եկել Թուրքիայում գտնուող պատմական նշանակութիւն ունեցող արժէքների հետ կապուած յայտարարութեամբ: Նա անդրադարձել է Թուրքիայում առկայ տարբեր քաղաքակրթութիւնների թողած մշակութային ժառանգութեան պահպանմանը, մասնաւորապէս՝ նշելով. «Մշակույթը չի լինում մահմեդական, հայկական, յունական: Դրանք բոլորը Անատոլիայի հարստութիւնն են, եւ մեր արժէքները: Դրանց պէտք է տէր կանգնենք, պահպանենք, այնուհետեւ ցոյց տանք զբօսաշրջիկներին: Սելջուկեան, Օսմանական եւ այստեղ ապրած միւս բոլոր քաղաքակրթութիւնների մնացորդ-

նրը՝ մերն են»:

Իսկ արդէն Օգոստոսի կէսերին Վանի Աղթամար կղզի եւ ս. Խաչ եկեղեցի է այցելել Թուրքիայի մէկ այլ պետնախարար՝ Ջեդեթ Երլմազը: Նա նշել է, որ Աղթամարի եկեղեցին հայերի համար շատ կարեւոր է եւ վերանորոգումից չեստոյ այն դարձել է աւելի գեղեցիկ եւ յարմար այցելութեան համար: Լրագրողներից մէկի այն հարցին, թէ եկեղեցին կրօնական արարողութիւնների համար բացելու խնդրում ձեռ կարծիքն ինչպիսին է, պետնախարար Ջեդեթ Երլմազը պատասխանել է, որ այս խնդրում որեւէ ուսումնասիրութիւն չկայ եւ պէտք է նայել պայմաններին եւ իրաւական կարգավիճակին: «Թուրքիայի Հանրապետութիւնը աշխարհիկ երկիր է եւ բոլոր կրօնները պետութիւնից

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ՝
Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՄՏՔԻ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ**

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.- Այս յայտարարութիւնը պատրաստուած էր շաբաթներ առաջ, ի պատասխան Կլեմտէյէն սադրիչ խմբակի մը անհիմն ու զրպարտչական մեղադրանքներուն: Այսուհանդերձ, նախընտրելի նկատուած էր այդ խմբակին ինքնապատակ գործունէութիւնը անտեսել եւ յայտարարութիւնը չհրապարակել մամուլին մէջ: Սակայն, յիշեալ խմբակը հեռատեսիլի ելոյթ մը ունեցած է, հիմնուելով 77 ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարեանի վերագրուած «Արմէնփրես»-ի շինծու հաղորդումի մը վրայ, որ հրատարակուած էր «Ասպարէզ» օրաթերթի Յուլիս 28ի թիւին մէջ: Այդ ելոյթին ընթացքին յայտարարուած է, թէ «հայոց պատմութեան կեղծարարները» պարտութեան մատնուած են եւ թէ անոնց դէմ այս արշաւը բաղդատելի է Աւարայրի ճակատամարտին: Վերջին այս գրգռութեան դէմ յանդիման, կը կարծենք որ հանրային կարծիքը ստեղծուած անհանդուրժելի կացութեան տեղեակ պէտք է ըլլայ: Միաժամանակ, կը հայցենք անոր զօրակցութիւնը 3այաստանի եւ արտասահմանի 250 ակադեմիկոսներու եւ մտաւորականներու, ինչպէս նաեւ 30 կրթական-մշակութային կազմակերպութիւններու, ընդդէմ մտաւորական աշխատանքը սեղծումի ենթարկելու եւ նուիրեալ գիտնականներ իբրեւ դաւաճան ու օտար կառավարութիւններու գործակալ պիտակելու այս դատապարտելի ընթացքին:

Անհրաժեշտ է մատնանշել, որ ակադ. Բարխուդարեան հերքած է յիշեալ կեղծ հաղորդումը, յայտնելով, թէ «մեր բաժանմունքի ժողովից յետոյ գրքի առնչութեամբ ոչ մի հարցազրոյց, ոչ մի խօսք չի եղել որեւէ անձի կամ մամուլի օրգանի հետ: Այդ ամէնը շինծու սադրանք է»:

Մենք, ներքոստորագրեալներս՝ գիտնականներ եւ սատարող կրթական-մշակութային կազմակերպութիւններ, մեր խորին վրդովմունքն ենք յայտնում ի ցոյց մի շարք անհատների եւ խմբակների կողմից վերջերս իրականացրած գործողութիւնների: Այդ գործողութիւնները միտում են վարկաբեկելու յատկապէս Միացեալ Նահանգներու հայագիտութեամբ զբաղուող գիտնականներին եւ հայագիտութիւնն առհասարակ:

Վերջին ամիսներին ականատես ենք լինում սոյն անհատների ու խմբակների հակամտաւորական գործունէութեան սաստկացմանը: You Tube-ում 2009 թ. Յունուարից ի վեր տեղադրուած գրպարտչական տեսանիւթերը եւ նորելուկ, այսպէս կոչուած «Հայ Առաջադէմ Ուսանողների Մոլթեան» ու «Հայ Ազգայնականների Միութեան» յայտարարութիւնները վկայում են, որ սոյն յարձակումները հիմնուած են կոպիտ խեղաթիւրումների եւ մտաւորական անազնուութեան վրայ: Պարտադիր չէ համամիտ լինել բոլոր գիտնականների կողմից առաջադրած եզրակացութիւններին կամ տեսակէտներին՝ շեշտելու համար թէ՛

ա) գիտնականների խօսքը չպէտք է վկայակոչուի բնագրի համատեքստից դուրս, կամ քաղուած տեսքտին վերագրուի իրականում հակառակ իմաստ,

բ) տարակարծութիւններն ու եզրակացութիւնները պէտք է հիմնուած լինեն հետազոտութեան արդիւնքների վրայ եւ արտայայտուեն մասնագիտական բարեկրթութեամբ,

գ) տարակարծութիւնները պէտք չէ վերածուեն մտաւորական հակաբեկչութեան ու արշաւի:

Ակնյայտ է, որ այս շարժումը վաղուց հեռացել է քննադատութեան, բանավէճի ու տարակարծութեան գիտական կանոնակարգից: Հայագիտութեամբ զբաղուող գիտնականներ, ներառեալ ներկայիս չարախօսութեան թիրախ դարձածներ, ակադեմիկոս աշխարհում եւ միջազգային հանրութեան մէջ արժանաւոր տեղերն են ապահովել՝ դառնալով միջազգային ատենաներում եւ մամուլում հայոց անցեալ ու ներկայ պատմութեան ընկալման վճռական հարցերի կապակցութեամբ հեղինակաւոր ձայներ:

Անկախ վերոնշեալ յարձակումների դրդապատճառներից, սոյն վիճակը միայն խիստ բացասական հետեւանք կարող է ունենալ շահագրգիռ բոլոր կողմերի համար: Նոյնքան հակա է նաեւ այն հանգամանքը, որ յարձակումները կարծես յարում են հայոց պատմութեան քարացած մի մեկնաբանութեան՝ կախուած միակենտրոն հեղինակութիւնից, որից շեղումները կարող են նկատուել իբրեւ դաւաճանութիւն: Ամբողջատիրական վարչակարգերին յատուկ սոյն մօտեցումը դատապարտելի է քանզի՝ ա) խոտոր է հանդիսանում հետազոտութեանն ու

Շար.ը էջ 18

**ԿՈՉ ՎԱՆԵՑԻՆԵՐՈՒ ԵՒ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐՈՒ**

ԲԺԻՇԿ ՍԱՐԳԻՍ ԳԱՐՆՑԵԱՆ

Անցեալ ամիս Հայաստանէն ստացուած տեղեկութիւններէն կարդացի հետեւեալ լուրը, «Յունիս 13, 2009ին կայացած Հայաստանի «Վասպուրական» հայրենակցական միութեան 7րդ համագումարին ընթացքին, միութեան գործադիր վարչութեան փոխ նախագահ Նորա Մելիքեան մտահոգութիւն յայտնած է այն մասին թէ միութիւնը կարիք ունի երիտասարդ անդամներու որոնք պէտք է շարունակեն աւագ վասպուրականցիներուն գործն ու միութեան գոյութիւնը երաշխաւորող աշխատանքները»:

«Անդրադառնալով առկայ խնդիրներուն՝ ան կարեւոր համարած է գրասենեակ ունենալու հարցը, որուն համար «Վասպուրական»ը կը պատրաստուի դիմել Երեւանի քաղաքապետարանին»:

«Յաջորդ կարեւոր հարցը, Մելիքեան ըսած է, սփիւռքի նոյնատիպ եւ այլ կազմակերպութիւններու հետ համագործակցութիւնն է, ինչպէս նաեւ հաղորդակցութեան նոր ձևերու՝ մանաւանդ ժամանակակից սարքաւորումներու՝ միութեան աշխատանքներուն մէջ»:

«Համագումարի ընթացքին ելոյթ ունեցող միութեան անդամները եւս անդրադարձած են երիտասարդական, ինչպէս նաեւ միութեան անդամ նշանաւոր գործիչներու, վանի հերոսամարտի մասնակից հերոսներու մասին լուսաբանման հարցերուն»:

Ես վանեցի կամ վասպուրականցի չեմ բայց հետաքրքրուած եմ Հայութեան ճակատագրով, 19րդ եւ մանաւանդ 20րդ դարու առաջին 25 տարիներով, մասնաւորաբար 1909էն մինչեւ 1925:

Մեծ Եղեռնի յաջորդող տարիներուն, մասնաւորաբար վերջին եօթնասուն տարիներու ընթացքին գտնուեցան մտաւորական եւ նաեւ ոչ մտաւորական նախանձախնդիր հայեր եւ հայրենակցական միութիւններ, որոնք զրի առին ու առանձին հատորներով հրատարակեցին Արեւմտեան Հայաստանի եւ Անատոլիի հայաբնակ քաղաքներուն եւ գիւղերուն ամբողջական պատմութիւնը:

Աւելորդ է շեշտել կարեւորութիւնը ազգագրական այս աշխատանքին, հայ ժողովուրդին ամբողջական պատմութեան պատրաստութեան տեսակէտով: Վաղուան պատմաբանին համար խիստ օգտակար ատաղձ պիտի հայթայ-

թեն անշուշտ այս հրատարակութիւնները: (Այսպէս կը վկայէր փրոֆ. Աւետիս Սանճեան - տեսնել Report on Current Research, 1958, page 47, Middle East Institute, Wash, D.C.):

Այս հրատարակութիւնները, որոնք ընդհանրապէս կը կոչուին հայրենակցական միութիւններու անունով աւելի կամ նուազ չափով կը բովանդակեն պատմական, աշխարհագրական, ազգագրական ծանօթութիւններ եւ լեզուական, կրթական եւ եկեղեցական կեանքի մասին տեղեկութիւններ:

Առաջին անգամ պատմաբան Արշակ Ալպոյաճեանն էր, որ 1937ին, իր «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» երկու պատմաբանի հատորներով լրջօրէն ուսումնասիրուած եւ դասաւորուած բովանդակութեամբ՝ օրինակ ծառայեց յետագայ շատ մը հեղինակներուն եւ հայրենակցական միութիւններուն:

Մօտ 30 տարիներ առաջ, 1979ին, «Պայքար» օրաթերթին մէջ հրատարակուեցաւ իմ մէկ աշխատասիրութիւնս «Կոչ Հայ Պատմաբաններուն եւ Հարենակցական Միութիւններուն» խորագիրով՝ որ կը ներկայացնէ հայ մամուլին մէջ 1937իէն մինչեւ 1979 տպագրուած 84 հայրենակցական միութիւններու հրատարակած հատորներուն ցանկը:

Իմ պրպտումներուս ընթացքին նկատեցի որ վանի մասին իւրաքանչիւր եւ ամբողջական հատոր մը չկար: Ուրեմն՝ յօդուածս վերջացուցի հետեւեալ նախադասութեամբ, «Կարեւոր է որ Արեւմտեան Հայաստանի ամենէն հայահոծ քաղաքին՝ Վանին եւ շրջակայքին պատմութիւնը պատրաստուի: Անշուշտ շատերուն ծանօթ է թէ Վանի մասին գրուած են բազմաթիւ յօդուածներ եւ հատորներ՝ մանաւանդ 1915ի Վանի հերոսամարտի մասին: Հակառակ ասոր սակայն, բոլոր հրատարակութիւնները ամբողջական պատկերը չեն տար հայկական Վանին եւ իր շրջակայքին»:

Վերոյիշեալ յօդուածս իր շահեկանութեան համար Անգլերէն լեզուով լոյս տեսաւ 1980ին, «The Armenian Review, March 1980, pp. 89-96» (Histories of Armenian Communities in Turkey):

Մի քանի տարի յետոյ իմ «Արեւմտահայութեան Յուշամատենները եւ Ազգագրութեան Անյետաձգելի Պահանջը» յօդուածովս որ լոյս տեսաւ երկու թերթերու

Շար.ը էջ 15



Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association



A.B.A. INSURANCE SERVICES

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԹԵՔ ՈՒՇ ԶԵ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՎՐԱՅ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԱՆԺԽՏԵԼԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ԻՍՐԱՅԵԼԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

ԹԻԻԵՐՈՒ ԱՃՆՇԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրեաները կը յայտարարեն աշխարհին, որ նացի Գերմանիոյ կողմէ հրեաներու վրայ գործադրուած ցեղասպանութեան պատճառած զոհուածներու թիւը վեց միլիոն եղած է:

Ամերիկեան լուրջ շաբաթաթերթ մը՝ «U.S.A. News & World Report», իր Յունիս 8, 1986 թիւին մէջ հրատարակած յօդուածով մը կը վկայէ՝ որ 6 միլիոնի այդ թիւը բացարձակապէս անճիշտ եւ առասպելական թիւ մըն է:

Նոյն յօդուածի վիճակագրութեան համաձայն, Եւրոպայի բոլոր երկիրներուն մէջ բնակութիւն հաստատած հրեաներու ստոյգ թիւը՝ 1935 թուին եղած է հետեւեալ բաժանումներով.

- Եւրոպայի եւ Գերմանիոյ մէջ 1,585,000
- Արբանեակ երկիրներու մէջ 1,418,000
- Խորհրդային Միութեան մէջ 1,950,000
- 1935 թուին ամբողջ Եւրոպայի մէջ գտնուող հրեաներուն ընդհանուր թիւը եղած է 4,963,000

Նոյն վիճակագրութեան համաձայն, համաշխարհային Բ. պատերազմէն ետք վերապրած կամ ցեղասպանութեան չենթարկուած հրեաներու թիւը եղած է, ըստ հետեւեալին՝

- Եւրոպայի բոլոր երկիրներուն մէջ 1,071,000
- Արբանեակ երկիրներու մէջ 750,000
- Խորհրդային Միութեան մէջ 2,197,000

Վերապրած կամ ցեղասպանութենէն ազատուած հրեաներու ընդհանուր թիւը եղած է 3,963,000

1935 թուին Գերմանիա բնակող հրեաներու թիւն էր՝ 413,000: Յետ համաշխարհային պատերազմի անոնց թիւը իջած էր 21,000-ի: Լեհաստանի մէջ հրեաներու թիւը նախապէս 592,000 էր: Պատերազմէն ետք՝ 187,000: Ռումանիոյ մէջ անոնց թիւը եղած էր 290,000: Պատերազմէն ետք՝ 110,000: Արբանեակ երկիրներու հրեաներու թիւը նախապէս եղած էր 1,418,000: Պատերազմէն ետք՝ 705,000:

Զարմանալիօրէն սակայն խորհրդային երկիրներու մէջ բնակող հրեաներուն թիւը 217,000-ով աւելցած էր:

Յստակ կը դառնայ այս թիւերէն, որ ամբողջ Եւրոպայի եւ Խորհրդային երկիրներու մէջ ապրող հրեաներուն թիւը պակաս է միայն 990,000-ով: Եթէ այդ թիւէն

հանուի Ամերիկա ներգաղթած 450,000-ը, կը պարզուի այն ատեն որ հիթլերական իշխանութեանց կողմէ հրեաներու վրայ գործադրուած ցեղասպանութեան թիւը եղած է միայն 540,000:

«U.S. News & World Report» շաբաթաթերթին կողմէ տրուած այս վկայութիւնները կը հաստատեն որ նացիներու կողմէ հրեաներուն վրայ գործադրուած ցեղասպանութեան զոհ գացած հրեաներու թիւը երբեք վեց միլիոն չէ եղած: «U.S. News» թերթի խմբագրութիւնը, նոյն թիւին մէջ կը գրէ որ այս թիւերը ստացուած են հրէական աղբիւրներէ:

Յիշեցնենք նաեւ որ Համաշխարհային Բ. պատերազմէն ետք, շատ մը երկիրներու հրեաներուն թիւը զգալիապէս աճած էր: Օրինակ, Ֆրանսայի մէջ անոնց թիւը նախապէս եղած էր 220,000: Ներկայիս անոնց թիւը հոն հասած է 630,000-ի: Ամերիկայի մէջ անոնց թիւը նախապէս եղած էր երեք միլիոն, ներկայիս Ամերիկայի մէջ անոնց թիւն է վեց միլիոն:

ԻՆՉ Է ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿՈՐՄՏԵԱՆ ՍՏՈՅԹ ԹԻՒԸ

“During the week, the church was always occupied. This was the family aspect I envisioned when I first came to Armenia. Parents with their kids and relatives were all over the place and together,” concluded Raffi.

ԳՈՒԱՐ ԿԸ ԲՈՅԱՎԱՌԷ ՇԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ԶԱՐԸ

ՆԱԹԻՐԻ ՏԱՂԼԵԱՆ

17 Յուլիս, 2009

Ժամացույցին սլաքը ութի վրայ էր կանգնած, երբ հասանք Հալէպի պատմական միջնաբերդը: Տարբեր շրջաններէ եկած հայահոծ բազմութիւն մը կը բարձրանար քարաշէն նոյն այդ սանդղամասերէն, գորս կը կրեն կայսրերու, թագաւորներու եւ իշխաններու ներբաններուն հետքերը, նախքան Քրիստոս. երրորդ հազարամեակէն սկսեալ: Յունական, Բիւզանդական, Այուպիներու եւ այլ քաղաքակրթութիւններ ընկալած եւ արշաւանքներ

լի տեսարաններ: ԳՈՒԱՐը սպասող երկու հազար հինգ հարիւր հարազատներ, խանդավառութեամբ ընդունեցին եւ շարունակեցին անյազօրէն ըմոշխնել զայն: Հարկ է նշել միմոսի դեր ստանձնած երեք տաղանդաւոր դերասանները, որոնք յայտագրի սկիզբէն, անխօս, ձեռքերու եւ դէմքի շարժումներով կը հաղորդէին եւ կ'ուղղէին յայտագիրը: Ելոյթը ընթացք առաւ ԳՈՒԱՐի աւանդական նախաբանով՝ Արամ Խաչատուրեանի «Վալս»ով: Երգացանկը կը պարունակէր գանազան տեսակի երգեր՝ սիրային, ազգային, ժողովրդական եւ աշու-



տեսած ու տակաւին կանգուն մնացած այդ բերդը, այսօր, այլ արշաւանքի մը հանդիսատես կը դառնայ: Տարբեր տարիքի պատկանող հայորդիներ, խանդաղատանքի արշաւով մը նպատակասլաց կը վերելքեն: Հասանք համոյթի կայացման

դական: Յայտագրի առաջին բաժնին մէջ վեհաշուք տեղ կը գրաւէին Կոմիտասի ստեղծագործութիւնները, «Իմ Չինարի Եարը», «Անձրեւ Եկաւ» եւ «Գնա՛, Գնա՛» շարքով: Հնչեցին նաեւ հայ հանդիսատեսին ենթագիտակցութեան



վայրը՝ ամփիթատրոնը: Մասնագիտական չափանիշերով կազմուած բեմը, ձայնի ու լոյսի գերարդիական սարքաւորումը եւ նկարահանման նորանոր ձեւերը կը շողախուէին հնամենայ բերդին քարերուն հետ: Ու հոն տեղի կ'ունենար գուգորդումը հինը նորին: Հոն, ժամանակաշրջանի հասկացողութիւնը կը վերանար: Բեմ բարձրացման ԳՈՒԱՐի հարիւր յիսուն հաւատարիմ գինուորագրեալները՝ երգչախումբին ու նուագախումբը, որոնց հետեւեցաւ սպարապետը՝ երաժշտական յիսնամեայ վաստակ ունեցող, գեղարուեստական ղեկավար ու խմբավար Սեպուհ Աբգարեանը, որ ԳՈՒԱՐի ստեղծման օրէն ի վեր, իր ձողի շարժումով կը ստեղծէ երաժշտական հրաշա-

մէջ արձանագրուած եւ անոնց ներկայութիւնը անխուսափելի դարձած «Հոփինա», «Հինգալա» եւ «Քամին Եանա» ժողովրդական երգերը: ԳՈՒԱՐի մենակատար երգիչ-երգչուհիները, ելոյթի կեդրոնական տիպարներն էին: Հոս հարկ է նշել, թէ իր ստեղծումէն, 1997 թուականէն ցայսօր, ԳՈՒԱՐ, իր մեծ ընտանիքի յարկէն ներս կ'ընդունի տարբեր մենակատարներ, առիթ ընծայելով եւ սատար հանդիսանալով երիտասարդ եւ տաղանդաւոր երգիչ-երգչուհիներու: Իւրայատուկ էր «Զուլթակ» երգը, որու երաժշտութիւնը կը պատկանի խմբավար Սեպուհ Աբ-

Շաբ.բ էջ 16

ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ «ԱՐԱՔՍ» ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԴԻՈՅԱՂՈՐԴՈՒՄԸ ՏՕՆԵՑ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ

Օգոստոսի 16 ին Ուրուկուայի «Արաքս» Հայկական Ռադիոհաղորդումը տօնեց իր երկրորդ տարին եթերում: Ներկայ էին 500-ից աւելի հանդիսատեսներ, որ լցրել էին Մոնթեվիտոյի «Միտաուսա» համերգասրահը, ունկնդրելու համար ՀՀ Մշակույթի վաստակաւոր գործիչ, «Տարօն» մանկական երգչախումբի գեղարուեստական ղեկավար երգիչ Գէորգ Չազմանեանին, Ուրուկուայի «Երեւան 50» նուագախումբին որոնց միացել էին Արգենթինայի «Մասիս» Պարախումբի երկու փայլուն պարուհիներ: Յաջորդ օրը, նոյն դահլիճում տեղի ունեցաւ մէկ այլ համերգ «Ներսէսեան եւ Նուպարեան» եւ «Ալեք Մանուկեան» երկու հայկական եւ տեղական «Արմենիա» անունը կրող դպրոցների ուսանողների համար, հայ ժողովրդական երգի հանդէպ երեխաների սերը սերմանելու: Հայրենի կուռնիկ էր, թէ հայրենի սոխակ, Գէորգ Չազմանեանը հայրենի երգն էր բերել Ուրուկուայ-



սիրտ Չերմացուն, այսինքն Խահակեանի պատմած լեգենդի պէս, երբ երգը կարողանում է քարացած սրտերը նորից կենդանացնել, ուրեմն գեղարուեստական հրաշքը կատարուել է: Ես ձեր երգը շատ եմ սիրում -



յում ապրող հեռաւոր քոյր ու եղբայրներին: Իր քաղցր ձայնով, իր հայկական «գուլալ եւ մաքրամաքուր», սարի ջրերի պէս ջինջ պարզութեամբ հնչող ժողովրդական երգերով նա գրաւեց հանդիսատեսների սիրտը: Ես եկել եմ ձեզ Չերմացունեւ ասաց երգիչը ու հայրենիքի տաք շունչ բերեց հեռաւոր հարաւի ձմեռն ապրող Ուրուկուայի հայութեանը եւ հայկական երգի Չերմութեամբ՝ հայրենիքի կարօտ սրտերը բաբախեցին նորից: Իսկ երբ երգը կարողանում է

ասաց դպրոցական համերգին մասնակցող երեխաներից մէկը. Երեւի աւելացնելու ոչինչ չկայ: Գէորգ Չազմանեանի այցելութեան առիթով, «Ռադիո Արաքսը» յատուկ երաժշտական հաղորդումներ էր ձեռնարկել: Մէկու՛մ հեռախօսով Երեւանից իր մասնակցութիւնն է ունեցել սիրուած երգչուհի՝ Ալլա Լեւոնեանը, իսկ միւսներում ներկայացուել է եւ բարձր գնահատուել Հայաստանի ժողովրդական արդիստներ ՕՖելիա Համբարձումեանի եւ Ռուբէն Մաթեոսեանի գործունէութիւնը:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱՎՈՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱՎԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ցնջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարազօղ, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ արհեստական սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125






























1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday - Saturday
9 am - 8 pm

MISSION
Wine & Spirits

825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday - Saturday
9 am - 8 pm

HUGE SELECTION!

EVERY DAY LOW PRICES!

<p>Johnnie Walker Red Label  \$15.99</p>	<p>Johnnie Walker Black Label  \$19.99</p>	<p>Johnnie Walker Green Label  \$37.99</p>	<p>Johnnie Walker Gold Label  \$47.99</p>	<p>Johnnie Walker Blue Label  \$119.99</p>	<p>Grey Goose Vodka  \$21.99</p>	<p>Smirnoff Vodka  \$8.99</p>	<p>Absolut Vodka  \$14.99</p>	<p>Sky Vodka  \$8.99</p>	<p>Ketel One Vodka  \$16.99</p>	<p>Cazadores Reposado  \$19.99</p>	<p>Patron Silver Tequila  \$29.99</p>	<p>Jose Cuervo Especial  \$10.99</p>	<p>Don Julio Blanco Tequila  \$29.99</p>	<p>Don Julio 1800 100 Proof Silver  \$17.99</p>	<p>Hennessy VS Cognac  \$21.99</p>	<p>Hennessy VSOP Cognac  \$32.99</p>	<p>Courvoisier VS Cognac  \$18.99</p>	<p>Jacques Cardin VSOP Cognac  \$15.99</p>	<p>Dewar's 12 Years  \$17.99</p>	<p>Dewar's White Label 1.75L  \$25.99</p>	<p>Crown Royal Canadian Whisky  \$14.99</p>	<p>Captain Morgan Rum  \$10.99</p>	<p>Ciroc Vodka  \$16.99</p>	<p>Russian Standard Vodka  \$9.99</p>	<p>Robert Cavalli Vodka  \$38.99</p>	<p>El Massaya Arak  \$19.99</p>	<p>Touma Arak  \$12.99</p>	<p>Noy 5 Years Armenian Brandy  \$16.99</p>
---	---	---	--	---	---	--	--	---	--	---	--	---	---	--	---	---	--	---	---	--	--	---	--	--	---	--	---	--

*This ad expires on 08/31/09 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CCs • All items are 750ml in size unless specified.

ԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ (ՕՆՆԻԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ)

(ԱՊՐԻԼ 27, 1915 - ՄԱՐՏ 14, 1984)

Հայ մեծանուն բանաստեղծ: Կենսագրություն

Յովհաննէս Շիրազը ծնունդ է կրում Կարապետում (նախկինում՝ Գիւմրի): Ամբողջ կեանքում նրա համար անմոռաց մնացին գիւմրեցի Թադէոսի (հօր) եւ կարսեցի Ասողկի (մօր) հետ կապուած տպաւորութիւնները: Թադէոսն Ախուրեանի ափին մի հին ու խարխուղ տնակ ունէր, ուր անց էր կացնում աշխատաւոր գիւղացու իր կեանքը, գոհութիւն յայտնելով Աստուծան եւ՝ տուածի, եւ չտուածի համար:

Կը գար հայրս Շիրակի հովերի հետ, իրիկուայ, Կը շողշողար բահն ուսին, ապրից ելնող լուսնի պէս...

Բայց ահա սպանուած է հայրը, իր իսկ խրճիթի շէմին, թրքական արշաւանքի ժամանակ: Սկսուած է մանուկ Օննիկի տխուր մանկութիւնը, որն անցնում է գիւղից-գիւղ, բանջարանոցից-բանջարանոց, մինչեւ որ ծուարում է Ալեքսանդրապոլի որբանոցում:

«Որբանոցից շատերն էին փախուած, պատմում է Շիրազն ինքնակենսագրականում, մեծ մասը դէպի շուկայ, իսկ ես՝ դէպի Արփաշայի հովիտները՝ փնտռելու հայրիկիս բոստանը: Եւ մի վայրկեան ծաղիկների ու կակաչների մէջ մոռանում էի, որ որբ եմ...»: Անհանգիստ ու կրակոտ խառնուածքը, սակայն, փողոց է նետում նաեւ Օննիկին, ուր վխտում էին անապատան երեխաները: «Ձուր տամ, պաղ ջուր, պուլպուլակի

ասուր ջուր», - կանչելով թափառում էր նա, բայց իր իսկ խոստովանութեամբ, միշտ ձախողակ ու անյոյշող:

Բայց ահա այդ ձախողակ օրերի մէջ փայլում է «ճակատագրական մի սուրբ վայրկեան»: Փողոցով անցնում է սեւ հացի բոքոնը ձեռքին մի խեղճ կին: Սոված

Օննիկը փորձում է փախցնել հացը, բայց կինը բռնում է նրան ու... սեղմում կրծքին: Այդ նրա մայրն էր՝ Ասողիկը, որ վերջապէս գտել էր կորած որդուն:

Նա փաղաքշելով ու «գիժ ջան, գիժ» կրկնելով տուն է տանում որդուն, որը հին ու կիսափուլ խրճիթ էր: Մօր խօսքը օրէնք էր Օննիկի համար, իսկ նա խորհուրդ է տալիս՝ «Արհեստ սովորիր... արհեստն է մարդուն ոսկէ բիւրգուկ»:

Արհեստներով հարուստ քաղաք Գիւմրիում Շիրազն սկզբում դառնում է կոշիկարի աշակերտ, ապա զբաղւում այլ արհեստներով, բայց ոչ մի զբաղմունք դուր չի բալիս նրան: Գպրոցում էլ նա լաւ սովորողներից չէր: Միայն հայոց



լեզուն էր, որ հարազատ էր նրան: Այստեղ էլ երեւում էր նրա բնածին տաղանդը: Հասակակիցներից ստանալով «խելառ» մականունը, պատանին սկսում է անընդհատ հանգեր յօրինել, բառեր կառուցել, բանաստեղծութիւններ գրել:

Գրում է ձեռքն ընկած պատառոտուած թղթերի, ինչ-որ տեղից ճարած թղթէ անձեռոցիկների վրայ: Այդ օրերին Գիւմրիում իր գրական մայրամուտն էր ապրում Ատրպետը, որին էլ ապագայ գրողը ծանօթացնում է իր բանաստեղծական գաղտնիքներին:

Ատրպետը դառնում է Շիրազի առաջին քննադատը եւ առաջինն էլ կուսում, որ ծնուող բանաստեղծը օժտուած է չքեղ տուեալներով: 1930 թ. պատանի Շիրազի բանաստեղծութիւնները տպագրուած են տեքստիլ գործարանի թերթում: Այդ գործարանում նա աշխատում էր որպէս ջուլհակ:

Բայց Շիրազի երազանքը «Բանուորի» էջերն էին: Հեռու չէր նաեւ այդ օրը: Իսկ յետոյ, ժամանակի գրական երիտասարդութեան հովանաւոր Վահրամ Ալազանի շնորհիւ երիտասարդ բանաստեղծի անունը շրջում է Երեւանում:

Յովհաննէս Շիրազը սովորել է Երեւանի համալսարանի բանասիրական ֆակուլտետում, այնուհետեւ՝ Մոսկուայի Մ. Գորկու անունան գրականութեան ինստիտուտի գրական բարձրագոյն դասընթացներում:

1984 թ., երբ այլեւս չկար Շիրազը, գրականագէտ Սուրէն Աղաբաբեանը գրում է.

«...Ամէն օր, նոյն ժամին յայտնուած էր Աբովեան, Ամիրեան, Տէրեան փողոցների խաչմերուկներում՝ գլխին հաւաքելով իր տաղանդի երկրպագուներին: Մրանք ասես թէ հաղորդակցուած էին Նոյի վաղնջական ժամանակներից, Աւարայրի

ուզմադաշտերից, Անիի բերդապարիսպներից, հայոց պատմութեան քառուղիներից մեր օրերը հասած հրաշագործ առասպելական հերոսի հետ: Այլեւս չի երեւալու ազգային ըղձաացի արծուների կերպարանքը, այլեւս բազմութիւնները չեն լսելու նրա կենդանի, սրամիտ, պատկերաւոր խօսքը, այլեւս Յովհաննէս Շիրազը անցել է յաւերժութեան գիրկը՝ անմահների համար սահմանուած յաւերժութեան օրէնքով»:

Յովհաննէս Շիրազը պաշտում էր երեխաներին: Նա նրանց համար մինչեւ ափերը լցուած բարութեան ծով էր:

Երբ գրկում եմ քայիկներին, Ձեզ եմ գրկում հայ քայիկներ, Երբ գրկում եմ ձագուկներին, Ձեզ եմ գրկում հայ քայիկներ: Կ'ուզեմ դառնալ տիեզերքիս Աստղերը ձեզ խաղալիքներ:

Մահացել է Երեւանում 1984 թ.ի Մարտին, թաղուել է Կոմիտասի անունան պանթէոնում: Մահուանից 20 տարի անց, համաձայն Շիրազի կտակի (նշուած Շիրազի բանաստեղծութիւններից մէկում), մի քանի հայրենասէր հայերի շնորհիւ նրա սիրտը թաղուել է Արարատ լեռան բարձունքներում՝ սառույցի մէջ:

Սկզբում գրողն իր բանաստեղծութիւնները ստորագրում էր Յով-

հաննէս Շիրակ:

Սակայն Ատրպետը առաջարկում է Շիրակը փոխադրել Շիրազով, որովհետեւ ինչպէս ինքն է նկատում, պատանու բանաստեղծութիւններն իրանի վարդաշատ քաղաք Շիրազի վարդերի բուրմունքն ունեն:

1935 թ. լոյս է տեսնում Շիրազի առաջին գիրքը՝ «Գարնանամուտ» վերնագրով, որով էլ տարածուած է բանաստեղծի համբաւը: Անհամար ընթերցողներ դառնում են Շիրազի պոէզիայի սիրահարները: Ձեռքից ձեռք են անցնում նրա բանաստեղծութիւնների հրատարակումներն ամսագրերում, լրագրերում: Շիրազի գրքերը մասունք են դառնում շատերի համար:

Յովհաննէս Շիրազի ստեղծագործութիւնները Հայաստանում լոյս են տեսել աւելի քան կէս միլիոն տպաքանակով:

Շիրազեան յորդաբուխ ու հայաչէն խօսքը երկար տարիներ հայրենասիրութեան ու ազգապահպանման պատգամն է վառում աշխարհասփիւռ հայութեան սրտում: Նրա ստեղծագործութիւնները թարգմանուել են աշխարհի 58 լեզուներով: Ամէնից շատ թարգմանուել է բանաստեղծի քնարի անգլիս գոհարը՝ «Բիբլիական» պոէմը:

ԿՈՉ ՎԱՆԵՑԻՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՍՊՈՒՐԱՎԱՆՑԻՆԵՐՈՒ

Շարունակուած էջ 6-էն

մէջ՝ «Նոր Օր», 8 Յուլիս 1983» եւ «Ասպարէզ» Յունիս 16, 1983ի գիրքերուն ցանկը 94 հասած էր բայց դժբախտաբար Վանի մասին ամբողջական գիրք չկար տակաւին: Երրորդ անգամ ըլլալով կոչ ըրի եւ նորէն յիշեցուցին Վանեցիներուն թէ Վանի մասին հատորի մը պատրաստութիւնը շատ կարեւոր է եւ անհրաժեշտ:

1997ին հրատարակուած էի փրոֆ. Ռ. Յովհաննիսեանի կազմակերպած հայկական պատմական քաղաքներու առաջին համաժողովին UCLA-ի մէջ: Ինձմէ խնդրուած էր խօսիլ Վասպուրականի հայութեան բնակչութեան թիւին մասին (Demography of Van Province, 1844-1914): Խօսքիս վերջը յայտարարեցի թէ Վանեցիք-Վասպուրականցիք պէտք է այս նահանգին «Հայ Պատմութիւնը» գրեն:

Թուրք փրոֆէսոր մը Սէտադ Լաչինը, յայտնի հակահայ անձ մըն է: Ան կը դասուանէ «19 Մարտ Համալսարան»ի մէջ, Չանաքալէ քաղաքին մէջ: Ան խմբագիրն է հակահայ ամսաթերթին Review of Armenian Studies, որ կը հրատարակուի Անքարայի մէջ: Այս թերթին պաշտօնն է փաստել թէ Օսմանցի թուրքերը հայերը չջարդեցին 1914-1918ին:

Լաչինը, հակառակ իր հակահայ կեցուածքին հետեւեալը կը գրէր UCLA-ի մէջ Վանի գոնֆէրանսի մասին, «Վան կարեւոր տեղ մը կը գրաւէ հայոց պատմութեան մէջ: Թուրք ժողովուրդին համար օգտակար պիտի ըլլար գիտնալ Վանի հայերու պատմութիւնը կամ տեսակէտը»:

Իմ կարծիքով Վանեցիք գոնէ Լաչինը չի չափ պէտք է գնահատեն Վան-Վասպուրականի կարեւորութիւնը:

Նկատի ունենալով որ Հայրենակցական գիրքերու ցանկը աւելցաւ տարուէ տարի, 2002ին անգլէրէն լեզուով վերահրատարակեցի կոչս Armenian Observer March 27, 2002 եւ Nor Gyank Յունուար

2008ի համարներով: Գիրքերու ցանկը բարձրացած էր 127ի բայց տակաւին Վանի մասին գիրք գոյութիւն չունէր:

Չորս տարիներ առաջ, 2005ին վերջին յօդուածս հայերէն գրեցի, կոչելով զայն «Արեւմտահայութեան Համայնքներու Յուշամատենաները» որ կը ներկայացնէր 134 գիրքերու պատկառելի ցանկ մը՝ ուր տակաւին կը բացակայէր Վանի ամբողջական պատմութիւնը:

Պէտք է կրկին շեշտել թէ Վան ամենէն կարեւոր հայ քաղաքն էր Թուրքիոյ մէջ: Ան մօտ երկու հազար ութը հարիւր տարիներ է վեր մասնաւոր տեղ մը գրաւած է հայոց սրտերուն եւ միտքերուն մէջ: Կը խորհիմ թէ 2,800 տարուայ Վանի պատմութիւնը գրելը անյետաձգելի պարտականութիւն պէտք է նկատուի Վանեցիներու եւ հայ պատմաբաններու համար: Այս մեր կողմէ կրնայ փափաքելի կատարելագործում մը նկատուիլ (wishfull thinking) առանց որեւէ իրականանալու հաւանականութեան մօտ կան հեռու տեսնէն:

Մենք կորսնցուցինք մեր 2800 տարուայ հայրենիքը: 1914ին ի վեր այսինքն մօտ 100 տարիէ վեր թուրքը դժբախտաբար կը ջնանայ արմատախիլ ընել ամէն ինչ որ հայութիւնը կը ներկայացնէ:

Թող չխորհու իթէ 100 տարի առաջ մեր կորսնցուցած հայրենիքին - գոնէ մէկ մասը պիտի չկարենանք ձեռք անցնել: Մարդկային Պատմութիւնը առաջուան կարծուածին պէս շիտակ, անփոփոխ գիծ մը չէ:

Այսօր, 2000 տարիներ առաջ ապրած Միջին Արեւելքի ժողովուրդներու սերունդները իրենց ստեղծած աստուծոյն կամ աստուածներուն գործակցութեամբ տիրացած են այսպէս ասած սուրբ հողերու: Բաղդատած վերոյիշեալ օրինակին հետ, մեր 100 տարուայ կորուստները շատ աւելի ամուր եւ օրինաւոր հիմերու վրայ են: Այս իրողութիւնը մեզի կը ներշնչէ յոյս եւ լաւատեսութիւն:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

ՀԲԸՄ ԵՒ ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆԸ Ի ՆՊԱՍՏ ԳԻՄՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՅԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ



ՀԲԸՄ-ՄԱԿի Յատուկ Նպատակի Մարմինը (ՅՆՄ) (AGBU-UN Special Interest Group), համագործակցելով ՄԱԿի Զարգացման Ծրագրի (ՉԾ) (UN Development Programme) հետ Հինգշաբթի, Յունիս 11, 2009ին, ՉԾի Հայաստանի Արհեստագիտական Կրթական եւ Վարժողական Ծրագրին ի նպաստ իր երկրորդ հիւրասիրութիւնը կազմակերպեց «Մեկերեան Բըլ Կալերի» հաստատութեան սրահին մէջ, Նիւ Եորք, ի ներկայութեան ութսուն հիւրերու՝ ներառեալ ՀԲԸՄի եւ ՄԱԿի բարձրաստիճան ներկայացուցիչներուն:

ՄԱԿի ՉԾը, Տանիմարբալի պետութեան նիւթական օժանդակութեամբ, «Արհեստագիտական Կրթական եւ Վարժողական Համակարգի (ԿՎՀ) Արիացնումի «Ծրագիրը կիրարկեց, որ Հայաստանի մէջ արհեստագիտական-տեխնիկական կրթութիւնը զարգացնելու եւ անոր մակարդակը բարձրացնելու նպատակին կը ծառայէ: ՀԲԸ Միութիւնն ալ, որ միշտ յանձնառու է կրթական ծրագիրներու զարգացման, ընկերակցութեամբ ՄԱԿի ՉԾին, հանգանակութիւն կատարեց ի նպաստ Գիւմրիի Պետական Արհեստագիտական Հիմնարկի մօտ արձանագրուած, սակայն նիւթական անբարենպաստ վիճակ ունեցող ուսանողներուն համար: Արհեստագիտական այս հիմնարկը կը մասնագիտանայ երկաթուղիի արհեստագիտական անձնակազմ պատրաստելու մէջ, եւ Հայաստանի մէջ միակ կրթական հաստատութիւնն է որ այս ասպարէզին յատուկ մասնագէտներ կը պատրաստէ: Այժմ, 36,000էն աւելի ուսանողներ արձանագրուած են Հայաստանի արհեստագիտական դպրոցներուն մէջ: Այս ուսանողներուն կը գլացուին հարկ եղած վարժութիւնները ձեռք ձգելու միջոցները, քանի ներկայիս անոնք գրկուած են իրենց յաճախած դպրոցներուն մատուցած անհրաժեշտ յարմարութիւններէն ու դիւրութիւններէն, ինչպէս նաեւ

Չամբուած նիւթերուն որակէն:

ՄԱԿի մօտ ՀԲԸՄի գլխաւոր ներկայացուցիչը՝ Ելենա Համբարձումեան յայտնեց թէ՛ «ՀԲԸՄ-ՄԱԿ ՅՆՄ-ը հպարտութեամբ կ'աջակցի ՉԾ-ի ԿՎՀ-ի ծրագրին: Մեր կարծիքով, շատ փնհաստելի ծրագիր մըն է, որուն կիրակէտը Հայաստանի մարզերուն մէջ կրթութիւն Չամբող հաստատութեանց նիւթական օգնութիւն հայթայթելն է»: Այս ընդունելութեան շնորհիւ, մօտաւորապէս չորս հազար տղար հանգանակութեամբ, այս գումարով կը գոյանակ Գիւմրիի Պետական Արհեստագիտական Հիմնարկը յաճախող քսան առաջադէմ ուսանողներուն կրթաթոշակները:

Ընդունելութեան ընթացքին, խօսք առին ՄԱԿի մօտ ՀՀ դեսպան Ն. Վ. Արմէն Մարտիրոսեան, Աւագ Ծրագրի Ղեկավար եւ Խումբի առաջնորդ, ՄԱԿի ՉԾ Արեւմտեան Անկախ Պետութիւններու Խմբաւորումի եւ Կովկասի, Լուսիա Վիսթոն, ինչպէս նաեւ «Եւրագիտ Կրիւսի» հիմնադիր ու նախագահ՝ Իան Պրեմմեր, որ իր շահեկան ելույթին մէջ անդրադարձաւ մասնաւորապէս միջազգային կացութեան ներկայ իրավիճակին, Հայաստանին մինչեւ Իրան, Հիւսիսային Քորիայէն մինչեւ չինաստան: Վերջինիս խօսքերը եւ պարզած տեսակէտները գերեցին ու հաճութեամբ ընդունուեցան ներկայներէն:

Որպէս գեղարուեստական բաժին, DJ Աշ Գրիգորեանի միջոցառութեամբ սկաւառակներու վրայ ձայնագրուած երգեր ունկնդրուեցան: Իւրաքանչիւր հիւր ստացաւ նաեւ, իբր նուէր, մակագրուած օրինակ մը Պրն. Պրեմմերին գիրքէն՝ «The Fat Tail: The Power of Political Knowledge for Strategic Investing»:

«Մեկերեան Բըլը» հաստատութիւնը, որ սիրալոյսով տրամադրած էր սրահը այս ձեռնարկ նուիրահաւաքման համար, Արցախ բանուած ձեռագործ գորգ մըն ալ նուիրեց, որ լուռ անուրդի դրուեցաւ:

ԳՈՐԱՐ ԿԸ ԲՈՅԱԿԱՌԷ ՀԱՅ ՌԻՍՈՒՑԻՉԻՆ ՋԱՐԸ

Շարունակուած էջ 13-էն

գարեանին: Մինչ Սաթենիկ Սարգսեանի ձայնի մեղմ թրթիւրը կը հաղորդէր «Վշտից Կոտրուած Զուլթակ»ի պատմութիւնը, տասը ջութակահարներ բարձրացան իրենց տեղէն ու յառաջանալով շրջապատեցին զինք, ստեղծելով անակնկալ եւ զգացական մթնոլորտ մը:

Ուշագրաւ էր ներկայութիւնը մեթցօ սոփրանօ ձայնաստիճան ունեցող Լիաննա Թեոսեանի ներկայութիւնը, որ ինքնատիպ ոճով ներկայացուց «Սիրելիս» եւ «Որքան Ցանկացայ» սիրային երգերը: Յովհաննէս Շիրազի խօսքերով՝ «Ամպեց Կորաւ» երգը կատարեց Հեղինէ Համբարձումեանը, որ իր թաւշային ձայնով լաւապէս մեկնաբանեց նաեւ, բոլորիս սրտերուն խօսող «Զինուորի Մօր Երգը»:

ԳՈՂԱՐԻ պաստառը իր կա-

սիլքի մը պէս կարծէք եկան ու անցան մեր աչքերուն առաջ: Ան նոյն թափով եւ ուժգնութեամբ նաեւ մեկնաբանեց «Զարթիր Լաօ», «Անդրանիկի Երգը» եւ «Արդեօք Ովքեր Են» երգերը: Բեմը թնդաց, երբ հանդէս եկաւ դասական պարիթոն Վազգէն Ղազարեանը եւ մեկնաբանեց «Արփա-Սեւան»ը: Պահուան մը համար, կարծէք թէ Արփան իրապէս միացաւ Սեւանին: Բեմին վրայ մագնիսական տիպար մըն էր Վահան Գրիգորեանը, որ «Երգիր Ինձ Համար», «Շողոտ-Շաղոտ», «Արմենիան Հողա...» եւ այլ ժողովրդային ու ազգային երգերով, գողտրիկ եւ անմիջական ձեւով գրաւեց հանդիսատեսները: Ազգային երգերով հանդէս եկաւ Արսէն Գրիգորեանը, որ կարողացաւ հայրենական երգերուն զգացական կողմերը ստոյգ ձեւով յայտնաբերել: Առնական ձայն քնքշանքը կը վերաբերի Սամուէլ Գալստեանին, որ մեկնաբանեց «Սէրս



տարելութեան չի հասնիր, եթէ երանգապնակէն պակաս գոյն մը՝ պարախումբը: Երգչախումբին, նուագախումբին եւ մենակատարներուն ընկերակցող եւ իր հանդերձներու գեղեցկութեամբ հանդիսատեսը հմայող պարախումբը, գեղանկարիչի պատկերը իմաստաւորող վրձինի վերջին հարուածն է: Հոս անպայման պէտք է անդրադառնալ այն շղարշին մասին, գոր, Սարերի Հովին մեռնեմ երգի ընթացքին, պարախումբը յաճախ շքեղութեամբ կը բարձրացնէ: Շղարշին վրայ գծագրուած է մեր անմահ «Ա.Բ.Գ.»ը: ԳՈՂԱՐԻ սկզբունքներէն է իր պատուանդանին վրայ պահել մեր հնամեայ ու փառապանծ լեզուն: Ա.Բ.Գ.ը ո՛չ միայն անբաժան մասնիկն է աշխարհասփիւռ հայութեան, այլեւ անոր գոյութեան իմաստը: Ան մեր ծնուցիչ հայրն է մայրն է: Ահաւասիկ այս պատճառով, «Հայ Իմ» եւ «Իմ Մայր» երգերու ընթացքին, լոյսերը կ'արտապիտէին Ա.Բ.Գ.ը բերդի պատերուն ու կամարներուն վրայ: ԳՈՂԱՐԻ համերգները կը կայանան ի պատիւ եւ ի յարգանս հայ սերունդներ պատրաստող եւ դաստիարակող հայ ուսուցիչին, ԳՈՂԱՐԻ հայապահպանման ուղիով:

Վանքում Տաթեւի» եւ «Սիրուս կը սպասեմ» երգերը:

Յայտագրի երկրորդ բաժնի ընթացքին, երբ կ'երգուէր «Զարթիր Լաօ» երգը, ժողովուրդին կը յանձնուէին Կիլիկիոյ Հայոց Թաւաւորութեան դրօշները, որոնք կը կրէին առիւծի պատկերը:

1080 թուականին, Ռուբէն իշխանի կողմէ հիմնուած Կիլիկիոյ Ռուբինեան հարստութեան, եւ ապա 1198 թուականին Լեւոն Բ. իշխանի ձեռամբ հաստատուած, Կիլիկիոյ առաջին թագաւորութեան փառապանծ օրերու չիշատակումն ու պաշտամունքն էր որ կը կատարուէր, նոյն շառաւիղին պատկանող հայրերիներուն կողմէ:

Կիլիկիոյ դրօշի ծածանումն ու մեր հերոսական պայքարներուն եւ ինքնապաշտպանական կռիւներուն նուիրուած երգերու արձագանգումը աներկբայ փաստերն են հայ ժողովուրդի գոյութեան ու կը հանդիսանան իբրեւ կուռան գալիքի յղթանակներուն:

Հայ ժողովուրդը պիտի շարունակէ տէր դառնալ ու սերունդէ սերունդ փոխանցել մեր ժողովուրդի գոհարը՝ պատմական արժէքը, ի սպաս դնելով իր առջեւ ներկայցող ամէն առիթ:

ԳՈՂԱՐԻ առաքելութեան ու անոր ստեղծագործ ուժի իբրեւ ակնաստեա, անկէ կը սպասուի շարունակել հայ ժողովուրդի պատմութեան պահպանումը իբրեւ գոհար եւ անկէ բխած շողերը արձակել այնքան հեռուներ, որքան կարելի է:

ԳՈՂԱՐԸ մշակոյթով հայութեան պահանջատէր կը դառնայ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՋԱՅՆԵԼ (626) 797-7680

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

2009, Օգոստոս ամսուան ընթացքին, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեան Քահանայական Ձեռնադրութիւն եւ Օծում պիտի շնորհէ երիտասարդ Սարկաւազներու:

Քահանան (ըլլայ ան ամուսնացեալ, կուսակրօն վարդապետ թէ եպիսկոպոս) կանչուած է, հրաւիրուած է ծառայելու յատուկ ասպարէզի մը մէջ: Այդ մէկը Եկեղեցւոյ ծառայութիւնն է, «հոգեւոր ծառայութիւն» մը, քանի որ անկախ ժողովուրդը հոգեպէս հովուելու աշխատանք մըն է, հիմնուած Յիսուսի իսկ խօսքին վրայ: «Ետեւէս եկէք եւ ես ձեզ մարդերու որսորդ պիտի ընեմ» (Մատթ. Գ. 19), միաժամանակ յանձնարարելով անոնց՝ ըլլալ աշխարհը համեմող աղ եւ աշխարհի խաւարը լուսաւորող լոյս:

Քահանային աշխատանքը, պաշտօնը եւ պատասխանատուութիւնը (Մատթ. Ե. 13-14) կը խտանայ այս հոգեւոր իրականութեան մէջ:

Ասոր համար, Հայ Եկեղեցւոյ հեղինակաւոր վարդապետներէն մէկը, կը խորհրդածէ: «Պէտք է ջանալ վէմ ըլլալ եւ ապա Աստուծոյ եկեղեցին շինել: Անշէջ լոյս ըլլալ եւ ապա ամբողջ խաւարը լուսաւորել: Քրիստոսի հետ աղ ըլլալ եւ ապա բոլոր անհամութիւնները համեմել» (ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՅԳԵԿՅԻ, Խրատներ, Անթիլիաս, 2002, թրգմ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, էջ 131):

Միւս կողմէ Աստուածաշունչը կը թելադրէ որ «Քահանային շրթերէնքները հետամուտ պէտք է ըլլան գիտութեան եւ մարդիկ անոր բերանէն պիտի փնտռեն օրէնքները, քանի որ ամենակարող Տիրոջ պատգամներն է ան» (Մատթ. Բ. 7): Սբ. Գիրքը քահանան կը կոչէ նաեւ «Աստուծոյ բերանը» (Երեմիա ԺԵ. 19):

Ահաւասիկ, այս ամբողջ իրականութիւնը կը պարտաւորեցնէ, որ Քահանան ըլլալու է իմաստուն, խոհուն, առաքինի եւ հարկաւոր գիտելիքներով պատրաստ:

Ի վերջոյ, ամէն քահանայ պէտք է պատրաստ գտնուի «ինքզինքը իբր օրինակ ցոյց տալու հաւատացեալներուն՝ խօսքով, վարքով, սիրով, հաւատքով եւ սրբութեամբ», միշտ նկատի ունենալով այն «Հոգեւոր պարգեւը», որ իր մէջ է եւ տրուած է իրեն քահանայական ձեռնադրութեամբ» (Ա. Տիմոթէոս Գ. 12-16):

Եթէ Քահանան իսկապէս հաւատարիմ մնայ իր կոչումին եւ գիտակից՝ իր ստանձնած առաքելութեան, յանձնառութիւններուն եւ պատասխանատուութեան, «Այն ատեն ան կրկնակի պատիւ պիտի ժառանգէ Առաքեալներուն եւ Մարգարէներուն հետ» (ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՅԳԵԿՅԻ, Խրատներ, նշ. աշխ., էջ 11):

Հետեւաբար, «Քահանան մի՛ գիտէք լոկ իբր մարդ, այլ իբր Աստուծոյ պատգամբեր, որովհետեւ ան է Տէրունական Խորհուրդին (Սբ. Հաղորդութեան) եւ Աստուծոյ ահաւոր սեղանին սպասաւորը, նաեւ միջնորդը՝ Աստուծոյ եւ մարդոց միջեւ, որ Խոստովանութեան միջոցով մեզ կը հաշտեցնէ Աստուծոյ հետ» (ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՅԳԵԿՅԻ, Խրատներ, նշ. աշխ., էջ 66-67):

«ԿՈՉՈՒՄ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ»

Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ Քահանայական Ձեռնադրութիւնը եւ Օծումը տեղի կ'ունենայ Սբ. Պատարագի ընթացքին: Բայց նախորդ օր, երեկոյեան, եկեղեցւոյ մէջ, կը կատարուի Քահանայական Կեանքի «կոչում»ի՝ այսինքն՝ թեկնածուն Քահանայական Կեանքին կանչելու կամ հրաւիրելու պաշտօնական արարողութիւնը:

Թեկնածուն Եպիսկոպոսին ներկայացնող Եկեղեցականը (որ կը կոչուի նաեւ «խարտաւիպ»), կրնայ ըլլալ վարդապետ, քահանայ կամ սարկաւազ, եկեղեցւոյ մուտքէն սկսելով, ծնրադիր թեկնածուն կ'առաջնորդէ դէպի Սբ. Խորան (դասին մէջ), ուր Եպիսկոպոսը բազմած է իր գահին վրայ:

Թեկնածուն ընկերացող եկեղեցականը, խօսքը ուղղելով Եպիսկոպոսին՝ կը յայտարարէ թէ Եկեղեցին իրմէ կը խնդրէ ներկայացնող Սարկաւազը Քահանայ ձեռնադրել: Այս խնդրանքին կը յաջորդեն աղօթքներ, յորդորներ եւ հարցումներ:

Եպիսկոպոսը, իր կարգին, կը հարցնէ թէ թեկնածուն կամ ընծայացուն «Ունի՞ Քահանայութեան համար անհրաժեշտ ուսումը: Պահած է ինքզինքը սուրբ կամ անբիծ: Արժանի՞ է ստանալու Քահանայութեան սուրբ պաշտօնը: Իր ազատ կամքով եկած է հոս», եւ այլն:

Թեկնածուն ներկայացնող եկեղեցականը կը պատասխանէ ձեռնադրիչ Եպիսկոպոսին կողմէ կատարուած այս հարցումներուն:

Այս անգամ, Եպիսկոպոսը, իր խօսքը ուղղակի թեկնածուն ուղղելով, կը հարցնէ: «Յանձն կ'առնե՞ս աստուածային այս պաշտօնը՝ հոգեկան մաքրութեամբ կատարելու եւ աշխարհի իրականութիւնները չփոխարինելու աստուածայիններու հետ: Յանձն կ'առնե՞ս Առաքեալներուն, Մարգարէներուն եւ Եկեղեցւոյ Հայրերուն հրամանները կամ օրէնքները կատարել: Կ'ընդունի՞ս Սբ. Երրորդութեան եւ Յիսուս Քրիստոս Աստուծոյ մարդեղութեան ուղղափառ հաւատքը: Կը նզովե՞ս բոլոր հերետիկոսները», եւ այլն:

Եպիսկոպոսը յաջորդաբար, կը յորդորէ թեկնածուն՝ հետեւելու եւ աշակերտելու Եկեղեցւոյ բոլոր Ուղղափառ (ուղղահաւատ) Հայրապետներուն:

Ասոնցմէ ետք, ընծայացուն Քրիստոնէական Հաւատքի իր խոստովանութիւնը կ'ընէ կամ կը դաւանի՝ արտասանելով Եկեղեցւոյ Ուղղափառ Հաւատամքը:

«ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԻ»

Քահանայութեան Կոչումի արարողութեան յաջորդ օրը, Սբ. Պատարագի ընթացքին, Աւետարանի ընթերցումէն առաջ, Թեկնածուն կ'առաջնորդուի Սբ. Խորան եւ կը ներկայացուի Պատարագիչ եւ Ձեռնադրիչ Եպիսկոպոսին:

Անգամ մը եւս կը հարցաքննուի: Ապա թեկնածուն դէմքով կը դառնայ դէպի հաւատացեալ ժողովուրդը, կը ծնրադրէ եւ իր երկու թեկերը վեր կը բարձրացնէ իբր աշխարհէ հրաժարելու նշան, նուիրութեան, միշտ Սարկաւազները կ'երգեն: «Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէսս Սրբոյ

ՅՈՒՇԱՅԱՆԴԵՍ ՆՈՒԻՐՈՒԿ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐԲ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆԻ

Շարունակուած էջ 8-էն

կից Կաթողիկոսի ընտրութիւն եւ օծում պիտի կատարուէր: Հոն մասնակցեցաւ կաթողիկոսական ընտրութեան եւ օծումին՝ յարգել տալով Մայր Աթոռի դիրքը: Երուսաղէմ գնաց յանուն Մայր Աթոռի երբ 1990 թուին յանկարծամահ կ'ըլլար Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան, ուր հոգեհանգստեան Սուրբ Պատարագը մատուցեւ կարգաց Հայրապետական դամբանակար Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Նոյնը կատարեց նաեւ երբ Սուրբ Էջմիածնի մէջ արկածամահ կ'ըլլար նոյն տարին Կ. Պոլսոյ Հայոց Երանաշնորհ Տ. Շնորհք Պատրիարք Գայուստեան, որուն դագաղին ընկերացաւ Ներսէս Արքեպիսկոպոս ու նախագահեց համագային յուղարկաւորութեան Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Մայր Եկեղեցւոյ մէջ, պատարագելով եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դամբանակար կարգաւով:

Ամենապատիւ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի պարտք կ'իյնար աւելի բարձր եւ պատասխանատու պաշտօն մը, երբ կարճատեւ հիւանդութենէ ետք կը վախճանէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. ուղիղ տասնամեակ մը առաջ: Ամենապատիւ Ներսէս Սրբազան, որպէս երէց հոգեւորականներէն մին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի եւ Եպիսկոպոսաց դասուն կողմէ կ'ընտրուէր Ամենայն Հայոց Հայրապետութեան ՏԵՂԱՊԱՀ, պաշտօն մը որ զինք կը դնէր պատասխանատու դիրքի վրայ՝ հրաւիրելով աշխարհատարած Հայ Եկեղեցւոյ Ազգային-Եկեղեցական ժողովը 1999 թուի Հոկտեմբերին, կատարելու համար նոր Կաթողիկոսի ընտրութիւնը: Ներսէս Սրբազան յաջողե-

ցաւ իր առաքելութեան մէջ եւ ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ յանձին Տ. Տ. Գարեգին Բ. Ներսիսեան Հայրապետի: Նորընտիր Հայրապետը գնահատանքով իր կողքին գտաւ եկեղեցւոյ զգալուն պաշտպանն ու կրօնաւորը, որուն վստահեցաւ հայրապետական իր պաշտօնին վերաբերեալ կարիքները որպէս փորձառու դիւանապետը Մայր Աթոռի»:

Յարութիւն Ֆուտուլեան խոր ներշնչումով ասմունքեց Ներսէս Վանականի գրած բանաստեղծութիւններէն երկուքը: Որմէ ետք, Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ անդրադարձաւ, թէ Ներսէս Սրբազանը մօտէն ճանչցած էր Լոնտոն իր համալսարանական ուսումնառութեան օրերէն, շեշտեց իր հոգեւորականի կեանքը, ծառայասիրութիւնը, հայրենասիրութիւնը եւ հաւատարմութիւնը հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Արդարեւ ինսամեակի մը ծառայութեամբ հարուստ իր կեանքը դարձաւ հրաշալի ընծայում Աստուծոյ Սուրբ Սեղանին: Աղօթեց, որ Աստուած իր հոգին լուսաւորէ: Սրբազան Հայրը գնահատեց Պէյլանի Հայրենակցական Միութիւնը, որ նախաձեռնած էր այս յուշահանդէսի ձեռնարկը:

Հանդիսավար վարսեր Մարգարեան Պէյլանի Հայրենակցական Միութեան անունով իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ հովանաւորեց եւ նախագահեց այս յուշահանդէսին, շնորհակալութիւն յայտնեց հոգեւորականներուն եւ հանդիսականներուն:

Յայտագրի աւարտին ներկաները երգեցին «Կիլիկիա» երգը, որուն յաջորդեց հիւրասիրութիւն:

սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ (հոս կը տրուի թեկնածուն անունը) ի սարկաւազութենէ ի քահանայութիւն»:

Յետոյ, երգչախումբը կը մասնակցի՝ յայտարարելով թէ թեկնածուն «Արժանի է»: Այս մէկը կը կրկնուի 3 անգամ: Ապա թեկնածուն կը դառնայ դէպի Սբ. Սեղան, Եպիսկոպոսին դիմաց, որ իր աջը կը հանգչեցնէ թեկնածուի գլխուն եւ կը կարդայ ձեռնադրութեան աղօթքը: «Ես իմ ձեռքս կը դնեմ ասոր վրայ, դուք բոլորդ աղօթեցէ՛ք, որպէսզի արժանի ըլլայ քահանայական աստիճանը մաքուր պահել Տէր Աստուծոյ Սեղանին առջեւ»: Կը յաջորդէ նաեւ ուրիշ աղօթք մը, խնդրելով Աստուծմէ որ թեկնածուն ամուր պահէ ա՛յն պաշտօնին մէջ՝ որուն կանչուեցաւ կամ հրաւիրուեցաւ:

Յետոյ, Եպիսկոպոսը թեկնածուն ուսէն կը վերցնէ Սարկաւազական ուրարը եւ կ'անցնէ անոր վիզին շուրջ՝ ըսելով: «Ա՛ն մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի լուծը, որովհետեւ Անոր լուծը քաղցր է եւ բեռը՝ թեթեւ»:

Ապա Սբ. Պատարագը կը շարունակուի:

«Ողջոյն տուք միմեանց»էն առաջ, թեկնածուն անգամ մը եւս կը ծնրադրէ Եպիսկոպոսին դիմաց, որ թեկնածուն կը յանձնէ Քահանայական պաշտօնին նշանները եւ Քահանայութեան զգեստները: Վա-

րագոյրը կը փակուի, որպէսզի թեկնածուն զգեստաւորուի:

Ամբողջական զգեստաւորումէ ետք, վարագոյրը կը բացուի եւ թեկնածուն կը կանգնի Եպիսկոպոսին դիմաց, որ այս անգամ միւլուտնով կ'օծէ անոր ճակատը եւ երկու ակները: Անոր կու տայ նոր անուն մը: Կարճ աղօթքէ մը ետք, Եպիսկոպոսը օծեալին կը յանձնէ Պատարագի Սկիհ մը եւ մաղղմայ մը, որոնցմով իշխանութիւն կու տայ Սբ. Պատարագ մատուցանելու:

Ապա, նոր ձեռնադրուած եւ Օծուած քահանան առաջին անգամ ըլլալով՝ պաշտօնապէս կ'օրհնէ հաւատացեալ ժողովուրդը: Մինչ երգչախումբը յաղթական կ'երգէ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», ներկայ բոլոր Եկեղեցականները եւ Սարկաւազները կը համբուրեն նորընծայ Քահանային ճակատը եւ աջը:

Ասկէ ետք Սբ. Պատարագը կը շարունակուի, առանց ընդհատուելու, մինչեւ վերջ:

Պատարագի աւարտին, նորընծայ Քահանան վար (դաս) կ'իջնէ եւ հաւատացեալները հերթաբար մօտենալով՝ երկիրդաձուլութեամբ եւ հաւատքով կը համբուրեն անոր օծուած աջը:

«Պէտք է լոյս ըլլալ՝ ապա լուսաւորել ամբողջ խաւարը: Աղ ըլլալ Քրիստոսի հետ եւ ապա ամբողջ անհամութիւնը համեմել» (Վարդան Վրդ. Այգեկցի):

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՄՏՔԻ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Շարունակում է 6-էն

հետազոտությունները վրայ հիմնված պատմության քննական վերլուծությունները, բ(սահմանափակում է անցելին ՝ իր բոլոր բարդությունները ու դեռևս չուսումնասիրված երևույթների միջով նայելու հնարավորությունները, գ) արժեզրկում է պատմական ու մշակութային ուսումնասիրությունների հիման վրայ ներկայի հասկանալու եւ ապագայի աւելի տրամաբանական ընտրություններ անելու միջոցները:

Յստակ է, որ սա սոսկ յարձակման թիրախ դարձած գիտնականներով սահմանափակուող խնդիր է, ոչ էլ ընդհանրապես հայագիտությունը գրադոկումների, հարցը վերաբերում է հայ մշակույթին՝ բառի ամենալայն իմաստով:

Ի նկատի ունենալով, որ գիտնականներ վարկաբեկելու եւ միատեսակություններ պարտադրելու գաղափարապես անանկ սոյն յարձակումները խիստ վտանգավոր են հայագիտական հետազոտությունների ազատություններ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետություններում ու հայ ժողովրդի մշակութային զարգացման համար՝

Ներքոստորագրելներս

1) Ստատում ենք հիմնադրված հետազոտություններ, տեսակետի ու մեկնաբանություններ ազատություններ,

2) Կոչ ենք ուղղում Հայաստանի եւ Սփիւռքի ղեկավար դիրք գրադոկումներ հասարակական ու պետական պաշտոնեաներին, գիտնականներին, լրատվամիջոցներին, ակադեմիական հիմնարկներին ու նրանց ղեկավարներին, ինչպես նաեւ կրթական-մշակութային կազմակերպություններին, որպեսզի միանան մեզ ու մերժեն հայագիտություն մէջ միատեսակ գաղափարներ պարտադրելու փորձերը՝ յանուն հետազոտություն ու մտածողություն ազատություն ու մշակութային հանդուրժողականություն:

Ստորագրված է՝

Հայագիտական Ուսումնասիրությունների (SAS) եւ

Հայագիտական Ուսումնասիրությունների Միջազգային Ընկերակցություն (AIEA) եւ հետեւեալ համալսարանների հայագիտական ուսումնասիրությունների ծրագրերի կողմից՝

- Պոսթոնի Համալսարան (Boston University)
- Թաֆթս Համալսարան (Tufts University)
- Փալիֆորնիայի Համալսարան, Լոս Անձեյլոս (UCLA)
- Փալիֆորնիայի Նահանգային Համալսարան, Ֆրէզնո (CSU, Fresno)
- Փալիֆորնիայի Նահանգային Համալսարան, Նորթրիձ (CSU, Northridge)
- Քլարք Համալսարան (Clark University)
- Գոլումբիայի Համալսարան (Columbia University)
- Հարվարդի Համալսարան (Harvard University)
- Միչիգանի Համալսարան (University of Michigan-Ann Arbor)
- Շիքագոյի Համալսարան (University of Chicago) եւ

Հետեւեալ Կրթական-Մշակութային կազմակերպությունների կողմից՝

- Ամերիկայի Հայ ձարատարագէտների եւ Գիտնականների Միություն (AESA)
 - Ամերիկայի Հայկական Գրադարան եւ Թանգարան, ԱՀԳԹ (ALMA), Ուոթերթաուն, Մէյնսթրիթ
 - Աւստրիայի Հայագիտական Ընկերություն
 - Թէքէեան Մշակութային Միություն, Լոս Անձեյլոս
 - Նոր Սերունդ Մշակութային Միություն
 - Հայագիտական Ուսումնասիրությունների եւ Հետազոտությունների Ազգային Ընկերություն ՀՈՒՀԱԸ, (NASSR)
 - Հայ Գրադարանագէտների եւ Գրադարանների Տեղեկատվական Միություն, ՀԳԳՄ (ALLIC)
 - Հայ Կրթական Հիմնարկություն, ՀԿՀ (AEF)
 - Հայ Փաստաբանների Ընկերակցություն, ՀՓԸ (ABA)
 - Հայկական Գրամատիկական Արուեստի Ընկերակցություն
 - Հայկական Կենտրոն, Գոլումբիայի Համալսարան
 - Հայկական Հետազոտությունների Կենտրոն, Միչիգանի Համալսարան-Տիրպորն
 - Հայկական Մշակութային Հիմնադրամ, ՀՄՀ (ACF), Արլինկթըն, Մէյնսթրիթ
 - Հայոց Յիշատակի Կենտրոն (CAR)
 - Հարաւային Փալիֆորնիայի Համալսարանի Հայագիտական Ինստիտուտ (USC)
 - Մոսկովայի Հայ Ուսանողների Միություն
 - Մտաւորական Փոխանցումների Երիտասարդների Ընկերակցություն, ՄՓԵԸ (SIVAM) Մոսկովա
 - Վերլուծություններ, Հետազոտություններ եւ Ծրագրավորում Հայաստանի համար, ԱՐՓԱ (ARPA)
- Նաեւ
Անհատ գիտնականների եւ ասպիրանտների կողմից

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՅԸ

CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ) GLOABCAST SATELLITE ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱՉ ՆԱԶԱՐ

ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30 Կլէնտէյլի 280-րդ կայանից

BUSINESS FOR SALE
ՕԱԽՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՐԱՏՈՒՆ
 Armenian Grocery, Meat & Deli for sale. \$120,000. 1,800 sq ft in the heart of Burbank. Steady sales, chiller, meat counter & equipment alone is worth the asking price. Owner also selling Water & Ice store in Glendale – coffee, teas, soda, snacks. Asking \$40,000 - makes \$2,000 a month profit. Contact Mary Sanchez - 310-539-8300

REQUEST FOR PROPOSALS (RFP) NO. 7519 ENVIRONMENTAL CONSULTING SERVICES

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified environmental consultants to provide services related to lead-based paint, asbestos, and other hazardous substances.

The work to be accomplished includes: testing for lead-based paint (LBP) through the use of an X-ray fluorescence (XRF) device or through the use of bulk paint chip sampling; testing dust for the presence of lead through the use of wipe sampling; testing the soil for lead content; testing for the presence of asbestos containing materials (ACM); testing for the presence of other hazardous substances (OHS); laboratory analysis; performance of LBP risk assessments; design of methodologies and specifications for LBP, ACM and OHS abatement; and monitoring at sites during the LBP, ACM and OHS removal process to ensure compliance with all applicable federal, state and local laws, regulations, guidelines and technical specifications.

Proposals will be accepted at 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057 until 2:00 p.m., (local time) September 4, 2009. Offers received after this date and time may, at the discretion of the Authority, be rejected without consideration.

Instructions for preparing your RFP are contained in the RFP and is available at www.hacla.org/psor call (213) 252-5405 or 252-1832 for a copy of the RFP. Questions of a procedural nature may be directed to John Price, Contract Administrator at (213) 252-5416 or by e-mail John.price@HACLA.org

A pre-proposal conference to discuss the RFP and answer questions will be held at 2:00 p.m., August 18, 2009, in the Authority's 5th floor Board of Commissioners meeting room at 2600 Wilshire Boulevard, Los Angeles.
 8/20, 8/27/09
 CNS-1664274#
 MASSIS WEEKLY

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Avenue Pasadena, CA 91107

Գրասենյակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով (200-էն մինչեւ 450 sq. feet)
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 797-7680

Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680
 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

ՄԱՐԱԶԴ



ՄԻՀՐԱՆ ՕՏԱՊԱՇԵԱՆ
(Ծնեալ Յուլիս 1, 1969 Դամասկոս-Սուրիա)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրելի ամուսնոջ, գաւկիին եւ եղբօր հանգուցեալ ՄԻՀՐԱՆ ՕՏԱՊԱՇԵԱՆի անակնկալ մահը, որ պատահեցաւ 13 Օգոստոս, 2009-ի առաւօտեան:

Յուզարկաւորութեան եկեղեցոյ կարգը տեղի պիտի ունենայ Ուրբաթ Օգոստոս 21-ի կէսօրուան ժամը 12:00ին, Հոլիվուտի Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցոյ մէջ, 1201 North Vine Stree, Hollywood, CA 90038: Իսկ թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հոլիվուտ Հիլզի Forest Lawn գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Տիկինը՝ Թամար Օտապաշեան Ծնողքը՝ Տէր եւ Տիկ. Անդրանիկ եւ Արփինէ Օտապաշեան Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Վահէ եւ Ծովինար Թամամեան եւ գաւակները Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Տօքթ. Նշան եւ Լիլիթ Օտապաշեան եւ գաւակները
- Եղբայրը՝ Տիար Սարգիս Օտապաշեան եւ գաւակները Խնամին՝ Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Այտա Խոճիկեան Քենին՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Լենա Գիւլիւքեան Աներորդին՝ Տիար Գիրգոր Խոճիկեան եւ համայն Օտապաշեան, Խոճիկեան, Աթոյեան, Գոճեան, Գորնալեան, Ալթունեան, Գասճիքեան, Պոյաճեան, Իմաստունեան, Խաչերեան, Մարգարեան, Գարակէօզեան, Տոյմաճեան, Նէնէճեան, Շիրանեան, Մանուկեան, Տէր-Խաչատրեան եւ Պասմաճեան ընտանիքները եւ համայն հարազատները:

Փոխան ծաղկեպսակի մուիրատուութիւններ կը խնդրուի կատարել մորաստեղծ «Աւետիս եւ Ռիթա Օտապաշեան» ֆոնտիմ իսկ վնարագիրները (check) հասցէագրել College America. հասցէ՝ My 360 Wealth Management c/o Odabashian Fund, 500 N Brand Blvd. Suite 1270, Glendale, CA 91203

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԱՆՔ

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը շուտափոյթ ապաքինում կը մաղթէ «Նոր Կեանք»ի խմբագիր Պրն. Գրիգոր Շէնեանին, որ վերջերս գործողութեան ենթարկուած է եւ այժմ ապաքինման շրջան մը կը բոլորէ իր բնակարանին մէջ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՎՐԱՅ ԳՈՐԾԱԴՐՈՒԱԾ ԱՆԺԽՏԵԼԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ԻՍՐԱՅԵԼԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Շաբուկաւուած էջ 7-էն

դատի հատուցման համար:

Հէնրի ՄՈՐԿԵԼԹ-ԱՌԻ ԵՒ «ՄԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

1915-ին, Թուրքիոյ ամերիկեան դեսպանն էր՝ Հէնրի Մորկելթ-Առի, որ ծագումով հրեայ էր: Հէնրի Մորկելթ-Առի ակնատես վկան ըլլալով հայ ժողովուրդի վրայ գործադրուած հաւաքական սպանութեանց, օրը-օրին կը տեղեկացնէր ամերիկեան կառավարութեան կատարուած գանգուածային այդ սպանութիւնները հայերու:

Ան նաեւ որպէս ամերիկեան դեսպան՝ փորձեց կատարել ազդու միջամտութիւններ թուրք իշխանութեանց մօտ, որպէսզի կասեցնէ հայ ժողովուրդի վրայ գործադրուած ցեղասպանութիւնը, դժբախտաբար առանց յաջողելու սակայն:

Հէնրի Մորկելթ-Առի յետագային հրատարակեց իր յուշերը, ուր յստակօրէն ու պատմական փաստերով ցոյց տուած է հայ ժողովուրդի վրայ գործադրուած ցեղասպանութիւնը:

Այդ յուշերու մէջ կայ ուշագրաւ դրուագ մը, ուր կարելի է

ՎԱՆԻ ԱՂԹԱՄԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԵՍ ԱՅԼԵՏՐԱՆՔ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՅՄԱՆԸ

Շաբուկաւուած էջ 5-էն

հաւասար հեռաւորութեան վրայ են գտնուած: Դրա համար բոլոր կրօնների հանդէպ էլ մեր յարգանքը ունենք: Այս իմաստով որեւէ ինդիք չունենք», - նշել է Թուրք-իսլի պետնախարար Ջեւդէթ Եւլմազը:

Ինչպէս երեւում է Թուրքիան միտումնաւոր մեծացնում է հետաքրքրութիւնը Վանի Աղթամար կղզու եւ սուրբ Խաչ եկեղեցու հանդէպ: Այսինքն սրանով Թուրքիան կողմը փորձում է յետին պլան մղել յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ այս

տարուայ Ապրիլի 22-ին ստանձնած պարտաւորութիւնների կատարումը: Իհարկէ լաւ է, որ վերջապէս թուրքական իշխանութիւնները ընդունել են, որ Աղթամարի ս. Խաչ եկեղեցին պէտք է խաչ ունենայ եւ գործի որպէս եկեղեցի եւ ոչ թէ՛ թանգարան: Բայց այս ամէնը չպէտք է դառնայ սակարկութեան առարկայ եւ որպէս այլընտրանք առաջարկուի Հայաստանին, որով Թուրքիան փորձում է խուսափել Հայաստանի հետ նախապէս ձեռք բերուած պայմանաւորուածութիւնների կատարումից: ԱՆԴՐԱՆԻԿ ԻՍՊԻՐԵԱՆ «ԱՅՍՕՐ»

տեսնել յոյս մը: Յոյս մը՝ արդարութեան վերահաստատման:

Հէնրի Մորկելթ-Առի, երբ անգամ մը եւս կը դիմէ ձեմալ փաշային, որպէսզի կասեցնէ հայկական ջարդերը, ձեմալ փաշայ կ'ըսէ իրեն հետեւեալը.

- Դուն հրեայ ես, ինչո՞ւ կ'ուզես պաշտպանել հայերը եւ միջամուխ կ'ըլլաս մեր պետական գործերուն:

- Այո, ճիշդ է որ ես ծագումով հրեայ եմ, - կը պատասխանէ Մորկելթ-Առի, - բայց ես արդարադատ անձ մըն եմ նաեւ եւ չեմ կրնար արդարացնել ձեր կատարած այս գանգուածային ոճիրները հայ ժողովուրդին դէմ:

- Մենք, - կը պատասխանէ ձեմալ, - 12 հողով յաջողեցանք տիրանալ Թուրքիոյ իշխանութեան: Մեր յաջողութեան գաղտնիքը կը կայանար միակ սկզբունքի մը մէջ: Մենք միասնական էինք: Մենք պիտի բնաջնջենք բոլոր հայերը, որովհետեւ կը վախնանք հայ ժողովուրդի միասնականութենէն:

Ցաւալի է որ այդ օրերուն չունէինք միասնականութիւն եւ հնարաւորութիւնը՝ տիրանալու միասնականութեան:

Ներկայիս սակայն ունինք միասնականութիւն, հետապնդելու արդարութիւնը եւ տիրանալու անոր:

ՀԱՍԱՆ ձԵՄԱԼ, ԹՈՒՐԿ ԺՈՒՐԿ ԺԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ

Ամերիկայի դեսպան Հէնրի Մորկելթ-Առի եւ ձեմալ փաշայի միջեւ տեղի ունեցած այս պատմական եւ ուշագրաւ դրուած առիթ կու տայ անդրադառնալու այլ կարեւոր միջադէպի մը մասին, որ նոյնքան նշանակալից է, որքան առաջինը:

Թալէաթ եւ ձեմալ հանդիսացան այն գլխաւոր երկու ոճրագործները, որոնք իթթիհատական միւս ղեկավարներու հետ յղացան եւ գործադրեցին հայ ժողովուրդի սպանը: Անոնց ցեղասպանական այս արարքը մանրամասնօրէն նկարագրած է Հէնրի Մորկելթ-Առի, իր գրքին մէջ:

Ջարմանալի գուզադիպութեամբ մը, ազգասպան ձեմալ փաշայի թուրք՝ Հասան ձեմալ, շուրջ տարի մը առաջ՝ 2008 թուի Հոկտեմբեր ամսուն Հայաստան գնաց եւ այցելեց Միջերկրային Յուշարձանը:

Ան ծաղկեպսակ մը գետեղեց հոն մեր երկու միլիոն նահատակներու, ինչպէս նաեւ Հրանդ Տինքի յիշատակին:

Հասան ձեմալ իր մեծ հօր՝ հայ ժողովուրդի վրայ գործադրած ազգասպանութեան համար ցաւակցու-

թիւն կը յայտնէ հայութեան, ինչ որ կը յատկանշէ զոչու՞մ՝ գործուած ահաւոր եւ սահմուկեցուցիչ ոճրագործութեան համար, որուն դժբախտաբար մասնակցած էր նաեւ իր մեծ հայրը՝ ձեմալ փաշայ:

ՉԼՂՈՒՄԻ ԱՅԼ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրանդ Տինքի ոճրագործութեան յաջորդող օրերուն, իսթանպուլի եւ այլ վայրերու մէջ հարիւր հազարաւոր մարդիկ, որոնց մեծ մասը թուրքեր, բողոքի աննախընթաց ցոյցեր կատարեցին ընդդէմ կատարուած այդ աններելի ոճիրին եւ ընդդէմ իշխանութեանց:

Այդ բողոքողները իրենց ձեռքերուն բռնած ունէին ցուցատախտակներ՝ որոնց վրայ գրուած էին հետեւեալ մակագրութիւնները. «Մենք բոլորս ալ հայ ենք», «Մենք բոլորս ալ Հրանդ Տինք ենք»:

2008-էն մինչեւ 2009-ի սկիզբը, բազմահազար թուրք մտաւորականներ, թէ մամուլով եւ թէ պետական իշխանութեանց զրկուած բողոքագիրներով կը դատապարտէին 1915ին հայ ժողովուրդի վրայ գործադրուած ցեղասպանութիւնը:

Անոնք նաեւ ներում կը խնդրէին վերապրող հայ ժողովուրդի գաւակներէն՝ թուրք իթթիհատականներու կատարած անթիւ-անհամար ոճրագործութիւններուն համար:

«ԹԱՓՈՒԱՄ ԱՆՄԵՆ ԱՐԻԻՆԸ ՉԻ ԳՆԱՆԱՐ»

Պատմական խօսք մըն է այս, ըսուած՝ բռնակալ թագաւորի մը կողմէ ԺԲ. դարուն (Սալահէտտին): Սալահէտտին իր մահուան անկողնին մէջ, նախքան մահանալը, իր որդուոյն կու տայ հետեւեալ խրատը. «Տղաս, իրատ կու տամ քեզի, որ գգուշանաս անմեղ մարդոց արիւնը թափելէ: Որովհետեւ թափուած անմեղ արիւնը չի քնանանար»:

Ուրեմն, թող իմանան ողջ թուրք իշխանութիւնները եւ ողջ աշխարհ եւ իսրայէլ, որ մեր նահատակուած երկու միլիոն անմեղ հայերու թափած արիւնը չի քնանար»:

Միշտ արթուն պիտի մնայ այդ սուրբ արիւնը եւ ամէն տարի, Ապրիլ 24-ին, պահանջատէր երիտասարդ հայորդիներու սրտին մէջ պիտի վերագարթնի այն՝ յանուն արդարութեան վերահաստատման: Եւ յանուն ցեղասպանութեան պատճառած վնասներու հատուցման:

Յանուն նահատակեալ երկու միլիոն հայերու պատկանող տուներու, հողերու, եկեղեցական եւ համայնքային գրաւուած կալուածներու եւ այլ կորուստներու ազատագրման: Յանուն արդար հատուցման:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

presents

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

SUNDAY, SEPTEMBER 20, 2009

VERDUGO PARK, GLENDALE

11:00 AM - 7:00 PM



Live Entertainment
Dance • Arts & Drafts
Food • Kid's Games
Backgammon Tournament

Երգ ու Պար
Արուեստի Գործեր
Փոքրերու Խաղեր
Նարտիի Մրձաշարք
Համադամ ճաշեր

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ